Universitäts- und Landesbibliothek Bonn

Patmut'iin Hamarot Aġuanic' Erkri

Hasan-J̌alalean, Esayi

Yerusaġêm, 1868

urn:nbn:de:hbz:5:1-57797

Visual Library

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ

ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿՐԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ

ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿՐԻ

ՑՕՐԻՆԵԱԼ

Ի Տ. ԵՄԱՅԻ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼԵԱՆՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՑԵՐՈՒՍԱՂԷՄ

1868—ՌՅԺԷ

Ի ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ· Տ· ԳԷՈՐԳԱՅ

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ· Տ· ԵՍԱՅԵԱՅ ՍՐԲԱԶԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս· ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍՈՅ

Տ· Տ· ՊՕՂՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Լսայի Կաթողիկոս, որոյ անուն թերեւս գտանիցի ի գաւազանագիրս Կաթողիկոսաց տանն Աղուանից, այլ մեք ի ձեռն առաջիկայ երկասիրութեանս եթէ ծանօթանամք անուան նորին, էր՝ որպէս յայտ է, ի հնագոյն յերեւելի և յիշխանազուն տոհմէն Հասան Ջալալեանց, որոց կենցաղ և գործք նշանաւորք՝ ունին զփառաւոր տեղի յազգային պատմութեանս։ Նստաւ սա յԱթոռն Սեորապօլսոյ Գանձասարայ, (որոյ գահակալք կոչէին Կաթողիկոս Աղուանից,) յառաջնում քառորդի ութեւտասներորդ դարու. սակայն չունիմք ի ձեռին կարեւոր և ստոյգ ծանօթութիւնս զվարուց իւրոց և զկենաց. այլ այս ճշմարիտ է՝ զի ընդ այլոց նախորդացն իւրոց համեմատեալ զսա, գտանեմք ըստ բաւականին տեղեակ ազգային դպրութեան և նախանձաւոր գործոց բարեաց, մանաւանդ եթէ վառեալ ի սէր ազգին իւրոյ, զգուշաւոր և փոյթ ի զարթուցանել ի համազգայինսն զոգի արիութեան և զյիշատակ քաջագործութեանց նախնեաց և զվինուորութեանցն՝ որ ընդդէմ թշնամեաց եկեղեցւոյն իւրեանց և ազգայնութեան։

Այսոքիկ թափառանցն իմն նշմարին ի հա-
կիրճ տեսութեան անդ զոր տայ մեզ պատ-
մագիրս յառաջիկայ երկասիրութեան իւ-
րում. որ թէպէտ վերջացեալ գտանի դա-
սական և ի կանոնաւոր ոճոյ նախնի դըպ-
րութեան մերոյ, և ուրեք ստորին յոյժ յա-
ստացուածս իւր և ի բացատրութիւնս իմաս-
տից, մինչեւ գաւառական բառս և օտա-
րազգիս եւս առնուլ ի կիր. սակայն կարե-
ւորութիւնն զոր տամք աշխատութեան
առնս՝ են պատմական տեսութիւնք անցից
վերջին դարուս, որ գործեցան ի մէջ Պարսից
և աշխարհին Վրաց և Աղուանից, և յարա-
բերութիւնքն որ ընդ ազգային պատմու-
թեանս են, ոքք և ձգին մինչեւ ցամն Տեա-
ռն 1723։

Առաջին անգամ տպեալ է մատեանս ի
Շուշի քաղաքի, յամի 1839, հրամանաւ և
ծախիւք Բաղդասարայ Հասան Ջալալեանց՝
Արքեպիսկոպոսի և Սպեռի Մետրապոլտի
և վիճակաւոր Առաջնորդի Պարապարու և
այլոց։

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ոմանք յառաջին՝ մանաւանդ թէ յոլովք ի նախկին կորովամիտ իմաստուն և քաջ նա և ի սուրբ արանց յառաջ բերեալ իւրաքանչիւր դարուց և ժամանակաց զեղեալ եղեալ իրաց պատմութիւնս հոգեւորաց և մարմնաւորաց, շարադրեալ թողին ինքեանց առյաւպայս եկեղեաց ի յիշատակ և ի զգուշութիւն։ Որոց զանուանս նոցին ոմանց արանց լուեալ մեր շարադրեցաք աստ սակս պատճառաց երկուց։ Նախ՝ զի դիտաւորութիւն բանիս առ պատմութիւնս ներկայիս է՝ յոլովմ եմքս. որոց նիւթ բանից և շարադրութիւն բառից ի նոցին ուսեալ գոլով գրոց, մի լիցուք ապերախտ նոցին երախտեաց՝ արտաքոյ թողլով զանուանս արանցն երախտաւորաց։ Եւ երկրորդ՝ ի նոցանէ թէպէտ ոմանք ի յազգէ Հրէից էին և ի հեթանոսաց, և ոմանք յայլազգ քրիստոնէից՝ այսինքն Յունաց, Ասորւոց և Լատինաց, և այլք ի մերս Հայոց ազգէ. սակայն բանք և վիպասանութիւնք նոցա ոչ է թարց հնոլոհաց ամենազօր Հոգւոյն սրբոյ Աստուծոյ. որոց այսօր ուսնախմբութիւնս է ի գլուխս յոբելեանի պենտեկոստէիս։ Ընդ որոց և

գլխական լեալ ասի ի Յովհաննէս Պապա-
յել Մինէ, որ և ածաւ ի լոյս տպագրու-
թեամբ յընթացս ամի անցելոյ, շնորհիւ
աշխատասիրութեան Վիկտոր անկլայ գաղ-
ղիացւոյ հայագիտի. և որպէս պատմէ սա
ինքն, բնագիր թարգմանութեանս գտեալ
է ի միում ձառընտրի եղելոյ ի կայսերական
գրատան Փարիզու։ Ի բաղդատել մեր ըզ-
ոյն ընդ մերում բնագրի, բաց ի դուշ-
նաքեայ ղանաղանութեանց գտաք ի նմա
զպատմութիւն գիւտի սրբոյ խաչին ի ձե-
ռըն Պատրոնիկեայ թագուհւոյն Կղոդվայ
կայսեր։ Եւ զի պարագայք պատմութեանս
այսորիկ ըստ մասին իմիք նման է պատմու-
թեան Հեղինեայ մօր մեծի Կոստանդիանոսի,
որ համարի երկրորդ գտիչ սրբոյ խաչին, վա-
սրն որոյ անկլոա ասէ զառաջնոյն՝ լինել վը-
բիսպակ ժամանակագրական և յայլոց ոմանց
հետագայից մուծեալ ի բնագիրն։ Թէպէտ
և չգուցէ մեր առձեռն պատրաստ վկայու-
թիւնք ի նպաստ ստուգութեան պատմու-
թեանս, յայլոց պատմաբանից երիցագունից
ժամանակաւ խօսեցեալ, սակայն չմեղանչէ
ոք թերեւս ընդդէմ պատմական ստուգու-
թեան՝ կարծել զառաջին գիւտ խաչին ե-
ղեալ ի ձեռն Պատրոնիկեայ, որ եկաց յաւուս

Մովսէս Աղուանից պատմագիր Կաղանկա-
տուացի, Ուխտանէս եպիսկոպոս Ուրհայու,
Ստեփաննոս վարդապետ Սոսնիկ, Առիստա-
կէս վարդապետ Լաստիվերտցի, Մատ-
թէոս վանայ երէց Ուռհայու, Սամուէլ
քահանայ կաթուղիկէին Ընոյ, Վանական
վարդապետ Տաւուշոյ, և Կիրակոս վարդա-
պետ և Վարդան նորին աշակերտք։ Այս
հուսկ վերջին և հուպ ի յետինքս Աբաքեալ
վարդապետ Դաւրիժեցի, որ ունի պատմու-
թիւնս ամաց իբրեւ վաթսուն և հնգից,
սկսեալ ի ՌԾ թուէն մինչեւ ի ՌՃԺԵ թիւն
հասեալ դադարէ։ Արդ՝ եթէ գոն այլ
ինչ պատմութիւնք ի մէջ մեր և կամ՝ այլ
ազգաց, թողաք զայն ի գիտուն նոցին, և
զայս միայն յիշեցաք զոր ի գիրս մեր գտաք։

Եւ արդ՝ սոցին ասա յիշեցելոց արանց
ոմանք, սկսան որ առաւել հմտագոյնքն էին,
ի Ստեղծողէն զարարածս, և ի նախկին մար-
դոյն Ադամայ, և ոճով իմն անցանելով ընդ
դարս և ընդ ժամանակս, և աւարտեալ
մինչեւ ի յինքեանց իսկ կեանս։ Իսկ ոմանք
ի նշանաւոր դարուց և ի քաջալոր թագա-
ւորաց և ի սքանչելի արանց սկիզբն եղեալ
են զբանս իւրեանց, և այսպէս իրաց ինչ ե-
ղելոց մեծամեծաց և փոքրունց, և այլ եւս

ի բռնակալաց արանց և ի գոռոզաց տիրու-
զաց, և ընդ հաւատոյս Քրիստոսի և եկե-
ղեցւոյ նորին մրցողաց, և հերձուածողաց
ամբարշտաց, և նեղութեանց ժամանակաց։
Այսու խաղաղարար և բարեպաշտ թագա-
ւորաց և իշխանաց, աշխարհի շինութեանց
և եկեղեցւոյ բարեկարգութեանց, և թշնա-
մեաց յաղթութեանց. եւս շարայարեալ
են ընդ պատմութիւնս զանազանս և հիա-
ցուցանօղս արժանիս ընելեաց, և հասու-
ցեալ են մինչ առ իւրաքանչիւր ժամանակ
առ իխրատ և յօգուտ և ի զգաստութիւն
յետագայիցս։ Որպէս զի բարեաց արանց
նախանձաւորքն ընդ բարին գովեսցին, և
չարքն և արհամարհեալքն ընդ նախկին չա-
րեացն արհամարհեալք արտաքսեսցին։

Այլ արդ՝ եղբարք իմ սիրեցեալք ի տէր,
քանզի նոքա ի ժամանակս տէրութեան քրի-
ստոնէից թագաւորաց և իշխանաց բա-
րեպաշտից գոլով, և կամ թէ ընդ իշխա-
նութեամբ այլազգեաց բռնաւորաց ան-
կեալ, որք թէպէտ թշնամիք օրինաց են, այլ
կամին շինութիւն և խաղաղութիւն աշխար-
հի և յոլովութիւն ռամկաց վասն օգտի իւ-
րեանց, այնքան աղէտս և կսկիծ և տառա-
պանս, և աղաղակ, և ամբաստանութիւնս

տրտնջանօք հանդերձ գրեալ են ի պատմութիւնս իւրեանց, որ և քաջայայտ իսկ է ձերում իմաստութեան։ Այպա ոչչափ և քանիցս և քանիպատիկ պարտիմք մեք ողբալ և հառաչել և աւաղել զողորմելի կեանսս մեր. և երկոքումբք ձեռօք հարկանել զգլուխս, և վա՛հ կարդալ զկորստեամբք մերովք, որ ոչ միայն ի թագաւորաց մերոց և յիշխանաց զրկեցաք, այլ և յայլազգի գոռոզաց և ի բռնակալաց, որ ակամայ կամօք հաճեալ և հնազանդեալ էաք ընդ տէրութեամբ նոցին (մնալ) բազում ժամանակս։ Ոչք թէպէտ հակառակ էին եկեղեցւոյ և օրինաց սրբոց, այլ ոչ խոպառ դիմամարտէին։ Այլ թէպէտ կեղեքէին, և կողոպտէին զկեանս մեր, այլ ապահով և խաղաղ եւս պահէին զմեզ յարտաքին և յօտար թշնամեաց և յաւարչաց։ Օ՛նոսին եւս եբարձ տէր Աստուած մեր յերեսաց իւրոց և ի մէնջ. եթէ վասն անկշռելի և անչափելի և անհամար մեղաց մերոց էր որում յաւէտ արժանի եմք՝ զոր կրեմքս, և եթէ յաղագս չափուց իւրեանց լրմանն՝ որ անցեալ էին քան զչափ բնութեանս մարդկան և օրէնսդրին իւրեանց յափշտակութեամբ, զրկողութեամբ, կաշառառութեամբ, պղծագործ-

ծութեամբ, և ամենայն իրօք չարեօք, թերեւս արժանն տարաւ ի տեղի հատուցման, որ չեղելոց զգործսն քննէ, և զչգոյն իբրեւ զգոյ կոչէ. նմա միայնոյ է գիտելի, և կարող է հատուցանել զհատուցումն նոցա նոցին։

Այլ դուք սրով եղանակաւ և կամիք ընտրեցէք. բայց ի մեզ ենհաս և կատարեցաւ հրաման Տեառն մերոյ և Փրկչին՝ թէ և տարաղէպ է ինքեան, եթէ՝ «Հարցց զհովիւն և ցրուեսցի հօտն»։ Այսպէս եղեւ և մեզ. զի յընտանի հաւատակից հովուաց վաղ ուրեմն էաք զրկեալք, այժմ յօտարաց հաւատ և յայլակրօն տերանց եւս մեկուսացաք. և եղաք իբրեւ նաւաբեկ ոք որ ի մէջ կոհակացեալ ալեաց ծովուն տարաբերի ուսիւք և ձեռօք, և ոչ ուսանիցէ լինի փրկութիւն։ Բանզի և ես այսպէս գիտեմ՝ թէ՛ ի հնումն և թէ ի նորումս սուրբ հարքն որքան ողբք և սուգ զոր ասացեալ և գրեալ են, զայն նախագիտութեամբ վասն այսր ժամանակիս է, և վասն մեր՝ և ոչ իբրեանց։ Վասն որոյ ոչ կարեմ տալ լուութեան. թէպէտ հայիմ և չափեմ զկարողութիւն անձին իմոյ, և տեսանեմ յոյժ տրկար և անիմաստ և յոռի քան զամենայն

մանկունս և զպաշտօնեայս եկեղեցւոյ, և
քան զուսումնակից իմ և ընկերս ըստ ժա-
մանակիս, մանաւանդ թէ մեղք զառա-
ձեալ և թշուառական կենաց զբաղեալս.
սակայն հայիմ ի քաջն և ի գիտունն քան
զիս, զի լռեալ յայսմ ամենայնէ անխոյթ առ-
նեն, և հարկանելոյ սրտիս ոչ տոկալ այսմ
անտանելի աղեաւիս, այլ յուսացեալ յամե-
նազօր աջ Տեառն և յառատաձիր պարգեւս
Հոգւոյն՝ որ խլեաց ըստ տայ, համերց խօսել,
և արժանաւոր աղօթիւք Տիրուհւոյ Կուսին,
և Կարապետին սրբոյ, և ի լոյս ածողին զմեզ
բազմերախտ հօրն մերոյ մեծին Գրիգո-
րի, և ամենայն սրբոց և եղբարց սրբանուէ-
րից, արկի զանձն իմ ի հոգս գործոյս այսո-
րիկ մոտատանջի, վստահացեալ ոչ թէ ի կարո-
ղութիւն իմ՝ այլ ի սէր սրբասէր և հեզա-
բարոյ եղբայրութեան ձերոյ։ Վասն որոյ հայ-
ցեմ և ժտեմ խոնարհաբար զինքանել ըստ
աշակերտացն Տեառն, մանաւանդ թէ աղօ-
թիւք օգնել, և մի քամահելով և պառաւելով
զանց առնել, գոլով և ձեր կարեկից և բը-
նութենակից մեզ ըստ բնութեան. զի և ի
գիրս աստուածային ի յոլով տեղիս մարդա-
սիրութեամբն իւրով իրք նուաստ առա-
ւել յարգի և գովի՝ քան զառաւելն և լոգ-

մեծամեծս։ Եւ վասն խորանին վկայութեան սպասու այծեայս եւս նուիրեցին ընծայաբերքն, և Տէրն իսկ գոլեաց զլուսայս այրուոյն. և գունակ նմին և ես աղերսեմ ընդունել ձեզ զտրակս զայս իբրեւ զնոյն. որ իբրեւ ի մէջ գիշերի թանձրամած խաւարեալ վերջացեալ ժամանակիս հազիւ թէ այսքանս ընձեռել կարացաք ապագայից ընթերցասէր եղբարդ, ի փառս Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն, և ի յօգուտ լսողացդ։

Ն. Ծ. Ապուծոյ
Կոմոտէին Աղուանից՝ Տէր Նոյէ
Հասան Ջալալեանց։

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿՐԻ

ԳԼՈՒԽ Ա.

Ընդ ժամանակս թագաւորութեան ազգին Պարսից՝ որ են կրօնիւք Մահմետականի, յորում սիրէին բռնակալութեամբ սկսեալ ի Կովկասային լեռնէ, և ի յեզերաց Կասպիական ծովուն, (որ երկաթի դուռն կոչի,) մինչեւ ի Մազանդարան և Աստարապատ. և անտի սահմանքն Յոզպեկու հասեալ ի Խորասան, և ի Գանտահար բերդ, և անտի ձգեալ յեզր ծովուն Հնդկաց ի Բանտար քաղաք և այսր ի Շիրազ. և միջոցաւ երկրաւ հասեալ մինչեւ ի Բաբելոն (այսինքն՝ Պաղտադ.) անդէն և այսր հասեալ սահմանք հասեալ մինչեւ ի Համատան և ի ծովն Վանայ. յորմէ և սահմանքն Մարաց հասեալ ի Խոյ և ի Սալմաստ. և Նախճաւանաւ հասեալ ի Արասխ գետ,

և անտի Սահմաթիւ Կաղզուանաւ և Կոզբաւ անցեալ ի գետն Ախուրեան՝ որ կոչի Երփայ —ջայի։ Եւ անտի անցեալ Ղայղուլի անուամբ նահանգիւ և ի սահմանս Վրաց ի Տփխիս քաղաք և ի Կախէթ՝ իւրովք բոլոր թեմիւք և թուամանօք։ Եւ ապա հասանի ի լեառն Կովկասու, դարձեալ ի նոյն ամուրն Հունարակերտ, (այսինքն՝ Դարբանդ,) և ի տեղի կայից գլխաւորի լեռնորդացն զոր Շամիրան անուանեն, և անուն տեղւոյ նորին Թարխու կոչեցեալ։ Երդ՝ ի յայս միջոցի ծոցոյ երկրիս արեւելեայց խառն ընդ հարաւ և ընդ հիւսիս կողմանս Եւրոպիոյ՝ տիրեալ էին ազգն Պարսից որ Ղզլպաշն կոչիւր, ունելով զաթոռ և զգահ արքայութեան իւրեանց զամենահռչակ արքայանիստ մայրաքաղաքն Շուշ, (այսինքն է՝ Ասպահան. և անդ կալով թագաւորացն՝ տիրեն և իշխեն վիճակեալ իւրոց հնազանդելոց ազգացն ձգեալ յաջ և յահեակ զթեւս իշխանութեան իւրեանց։

Այլ արդ՝ ասասանօր տարակուսիմք ասկըս նախնի ցեղապետութեանց՝ թէ յո՞րմէ ազգէ և ծննդոց սերեցան սոքա թագաւորազունք, և կամ յո՞րմէ հետէ յառաջացեալք եղեն. քանզի սրբազան հայրն մեր

Մոլեռս քերթողն հաւատէ մեզ այսպէս, եթէ «Ընշակ քաջ պարթեւն վանեալ ըզ-Մակեդոնացին՝ զդայեակորդին Ալեքսանդրի, որ ամս վաթսուն և կամ աւելի կալեալ ունէին զթագաւորութիւնն Պարսից, որ և զեղբայրն իւր Վաղարշակ երկրորդ իւր կարգեալ՝ թագաւոր ի Հայս առաքէ»։ Եւ այսպէս ի մէջ ցեղէ եղեալք երկուց ազգաց Պարսից և Հայոց թագաւորք պարթեւքն՝ մինչեւ ի ժամանակս Սասանականին Արտաշիրի սպանանելոյ զԱրտաւան արքայ Արշակունի. և ինքն կորզեալ զթագաւորութիւնն Պարսից. և ազգաց տիրեաց մինչեւ յերեւումն Մահմետի. որ զկնի երեսուն կամ աւելի և պակաս ամի տիրելոյն իւրեանց, սպանին զՅազկերտ արքայ Պարսից, և տիրեցին նոցին իշխանութեան. յորմէ տիրապետեալ ոմն Մահմուտ անուն քառնացեալ ի Բահլ, և անտի մինչեւ ի Խորասան. և ապա փոխանակելով զմիմեանս յառաջացեալ առին զՀռէ։ Իսկ որդի Մահմուտին Մասխուտ անուն ի Հռէոյ էառ զՀնդաստուր, զխազուին, զԱսպահան, և զամենայն տունն Աբազու և զԲրտաստան. (այս ըստ սրբոյ վարդապետին Վարդանայ։) Եւ ապա ասէ զսոցանէ՝ որդի զհայր

փոխանակելով յերկար ժամանակս նստան ի Խազուին, որոց անուանք են այսոքիկ, Ա-բուալի, Տաւութ, Օաղլպեկ, Ապու-Թալիպ, Տողրիլպեկ, որ զօրացեալ ի Խալիֆայէն, և առեալ զհրաման և անուն սուլդանութեան, ընդարձակեաց զսահմանն իւր սկսեալ ի Խորասանայ՝ և զամենայն երկիրն Պարսից։

Օսա փոխանորդէ Ալփասլան եղբօրորդի իւր, և զկնի նորա Մելիք շահ կոչեցեալ. և ապա Մահմուտ սուլդան, և յետ նորա Բաքարուխ. և որդի Մահմուտ սուլդանին եհար զԲաքարուխն, և ինքն սուլդանացաւ։ Իւ զկնի Մահմուտի որդի նորա. և Սանճար սուլդան ոմն սպանանէ զնա և առնու զիշխանութիւնն. և ապա Տաւութ որդի նորա. և զկնի Տողրիլ. և յետ նորա Մախսուտ. և ապա միւս Տողրիլ. զկնի որոյ Ալփասլան, որ էառ զՄի քաղաք մինչեւ ի Վրաց տուն, որ և պատուեալ ի Խալիֆայէն իւրեանց։ Իւ այս Ալփասլան փոխեաց այլվի Տողրիլ. և ապա Շահի արմէն, և զկնի Իլտկուզ. զկնի որոյ Փահլաւան և Խզիլասլան որդիք սորա՝ որ ի միասին տիրեցին աշխարհաց. և այս հասանի մինչեւ ի ոՒզ թիւս հայոց։ Յոյսմ միջ-

ցի ոչ գտաք զորպէսն, բայց սոյն վարդապետ ասէ, թէ ի ոհդ թուին եկն Թաթարն, և ի Խորասանուս փախոյց զԶրդիս Խորազմ շահին։ Իսկ գալուստ Թաթարին՝ և փախուցանել զՋալալատին սուլդանն ի Խորասանայ, և յառաջ խազալն առ մեզ, և յաղթելն և տիրելն ամենայն երկրի, և վիճակելով ելանելն և առնուլն զտիեզերս, և պէս պէս չարութիւնք և գործք նոցին զոր անցուցին ընդ ամենայն ազգս արեւելից և արեւմտից, հիւսիսոյ և հարաւոյ, զայս ամենայն ուսուցանեն մի ըստ միոջէ Վանական, Կիրակոս, և սոյն Վարդան վարդապետք և պատմագիրք, որք և հասուցանեն մինչեւ ի չԺԵ թիւս զպատմութիւն բբռնակալութեան սոցա. և զկնի ոչ գտաք զորքանութիւն ամաց իշխանութեան սոցա. և կամ թէ ուրով եղանակաւ բարձան, և ով որք էր որ հալածեաց և չքացոյց զնոսա յաշխարհէս մերմէ. և կամ ոյք էին որք տիրեցին և բռնակալեցան երկրին Պարսից. մինչեւ ասի ի ՌԼԵ թուին գալն Թամուրլանկին, որ և նա գազանաբար եկեր և մանրեաց, և ըզմնացորդսն առ ոտն եհար ըստ տեսլեանն. և զամենայն տիեզերս ի հարկի կացոյց, սկսեալ ի Սմրղանտայ մինչեւ ցՍամարիա և

զԵգիպտոս, ժամուռթ և տան մաշելով ի տուր զամենայն հասակ, և քայքայելով զեկեղեցիս ուր եհաս գնացք ոտիցն, որոյ ընդհանդամանս չարագործութեանն պատմէ քեղ Թովմա վարդապետ Երծրունի։ Եւ ըստ կնի տորին գալ Ալարայ Յուսուփ չարին ասէ ի պՃեթ Թուին, և կերպակերպ չարիք նորին. զկնի որոյ ի ՊՀ Թուին Շահռուխ ոմն կրկնաչարագոյն քան զնա երեւեալ, և ապա Զաղաթայն։ Յետ այսորիկ Զհան շահն ազգաւ Թուրք, որ Թագաւորակերպ տիրեալ բոլոր երկրին Պարսից ի պՃԸ Թուին. և զաս փոխանորդէ Եաղուբ փառաշահ որդի իւր, ի ՉԼԸ Թուին հայոց։

Այս Եաղուբ Թագաւոր որ նստէր ի Դաւրէժ շահաստանի, փեսայացոյց ինքեան ի քոյր իւր զշէխ Հայտարն, որ էր որդի Շէխսեփուն որ նստէրն Ամրտաւիլ քաղաքի։ Այս շէխ եղելոց սկիզբն և ազգն և որպիսութիւնն ոչ գտաք ուրեք թէ ո՛, կամ յորմէ ցեղէ յառաջացեալ ընակեցան ասա։ Այս շէխ Հայտարին ծնանի որդի մի զոր անուանեն Իսմայէլ, և վասն ոչ ունելոյ զաւակ Եաղուբ Թագաւորին, վասն որոյ շէխին և կինն իւր խորհեցան հնարիւք իմն սպանանել զԵաղուբն, զի ինքեանց և որդւոյ

իւրեանց մնասցէ ժառանգ թագաւորութեան. որ և արարին իսկ։ Քանզի կոչեցին զնա ի պատճառս պատուոյ, և պատրաստեցին նմա կերակուր մահարար, և ի ճաշակելն նորա՝ իսկոյն զգաց. և ապա բռնի հրամայեաց ուտել և ինքեանց. և այսպէս ի միում ժամու մահացան թագաւորն և քոյր իւր և շէին. և յաղմկել զօրացն՝ զմանուկն Խմայէլ փախուցին ի Աղթամար կղզի. (այս ըստ Առաքել վարդապետի դաւրիժեցւոյ վիպասանութեան.) և այսու զկնի զմիմեանսք ելեալ յառաջացան ի գահ իշխանութեան. որ և Անխաւր անուն ումն բռնացաւ և տիրեաց, և հաստատեաց զաթոռ իւր Աստահան ի Ջիլ թուին. և յետ նորա Ալմանդն սուղ ժամանակաւ. որ և տեւեցին մինչեւ ի ՋԾ թիւն հայոց։ Արդ որպէս ի գլուխ ճառիս խորշելով խոյս ետու ըստ կարգի և ըստ ազգաշարութեան ողջոյն գիտել և գրել ըզկարգ թագաւորութեանն Պարսից, որպէս արդի զՀայոց փոխանակեալ։ Այլ այսքան միայն ի հնագիր պատմութենանց հաւաքեալ զանուանս երեւելի և նշանաւոր արանց գոռոզաց և ամբարշտաց, հաստատեալ մինչեւ ցայս վայր՝ ի զբօսանս եղբարց մերոյ սիրելեաց. և Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեան. ամէն։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս սկզբան Բագաւորութեան Պարսից, և որք Այրմրագլուխ կոչին. և խանգարման իշխանութեան նոցին։

Արդ՝ որպէս ասացաք զսպանումն Նաղուբ Թագաւորին և շէխ Հայտարին, և փախուցանելն զմանուկն Խմայել ի Մղթամար կղզի, և զկնի ամաց ինչ զարգանալոյ տղային՝ աղմուկ շփոթի ոչ սակաւ լինէր տանն Պարսից. և ապա միաբանեալ զօրագլխաց և զօրացն հանեն զԽմայէլն ի կղզոյն և Թագաւորեցուցանեն ի յինքեանց վերայ ասելով, թէ սա է ժառանգ երկուց կողմանցն, այսինքն շէխին, և գողով քվեր որդի Նաղուբ Թագաւորին, և սմա անկ է Թագաւորութիւնն. վասն որոյ հնազանդեցան և երկրպագին նմա։ Նա նա ելեալ ի ջՀ Թուին, նախ հալածէ զյառաջ առացեալ զՄլանդն, և յինքն գրաւէ զիշխանութիւնն. և ապա պատերազմեալ ընդ յաջ և յահեակ թշնամիսն զամս քսան և հինգ, ընդարձակէ զսահմանս իւր ըստ կարողութեան. և վարեալ զիշխանութիւնն՝ մեռանի ի ջՀԵ Թուին։ Զկնի որոյ Թագաւորէ

զդգի նորին շահ թահմազ ի նոյն ամի, այր քաջ և արի։ Սա յոլով տեղիս արար ընդ իւրով իշխանութեամբ, որպէս զԱրպատական և Վրաց աշխարհն քառնութեամբ հնազանդեցոյց. և ի կողմանս Խորասանու նոյնպէս ընդարձակեաց. նա և բազում կարգս ուղղեաց իշխանութեան իւրում և թեթեւութիւնս հարկաց, որպէս և ասեն։ Իւր սա վախճանի ի ռիզ թուականին, և փոխանակ կացուցանեն զորդին իւր Խամայել անուամբ. որոյ կամեցեալ զբռնագլուխսն և զանհնազանդ խորամանկան ի զօրագլխայ և զօրայ իւրոյ բառնալ յերեսաց. իսկ նոցա ուճապարեալ քան զնա ընդ փոքթ կենաղբաւեն՝ որպէս ասի հնարիւք ինն մահացուցեալ. և զկնի սորին քերեն զեղբայր իւր Խոսրովանոյ կոչեցեալ ի Խորասանայ, այր անարի, պակասեալ եւս ի լուսոյ. և սա եւս զամս սակաւս դաժանութեամբ և դառնութեամբ վարեալ զիշխանութիւնն մեռանի. և ապա ի ռիթ թուին որդի սորին Ապաս՝ կոչեցեալն Մեծ, շահ նստուցանեն ի Աշաս. որ և ընդ սակաւ ժամանակս հնազանդեցոյց զշրջագայ թշնամին իւր, և ի բուռն էառ զբոլոր երկիր հայրենի իշխանութեան իւրոյ. և ի Խորասանայ մինչեւ

տեսեալ հանդերձ այլ ընկերովք քովք։ »
Այսպէս ցնա Աղդէ առաքեալ. «Այս ոչ դադա-
րեմ ի քարոզելոյ, զի վասն այնորիկ առաքե-
ցայ այսր ասել և ուսուցանել ամենեցուն
որ միանգամ կամին հաւատալ իբրեւ ըզ-
քեզ։ Արդ՝ հրաման տուր առ վաղիւ և
ժողովեա առ իս զամենայն քաղաքս, և սեր-
մանեցիս ի սմա զբանն կենաց զոր քարո-
զեմ առաջի ձեր վասն գալստեանն Քրիստո-
սի. թէ զիարդ եղեւ. և յաղագս Հօր ա-
ռաքչի նորա՝ թէ վասն էր, և կամ որպէս
առաքեաց զնա. և յաղագս զօրութեան նո-
րա և զարմանալի գործոց իւրոց, և վասն
փառաւորեալ խորհրդոց նորա զոր խօ-
սեցաւ յաշխարհի. և վասն ճշմարիտ քա-
րոզութեան նորա՝ թէ որպէս և վասն էր
փոքրկացոյց զանձն իւր և խոնարհեցոյց ըզ-
բարձրութիւն աստուածութեան իւրոյ ի
մարդկութիւնս մեր զոր առ. և խաչեցաւ
կամօք իւրովք և էջ ի մեռեալս. և խրատ-
տեաց զսանկն զոր երբէք ոչ ոք էր խրատ-
տեալ. և կեցոյց զմեռեալս մահուամբ իւ-
րով. և իջեալ ինքն միայն և ելեալ հան-
դերձ բազմօք առ Հայր իւր փառաւորեալ,
այն որ ընդ նմա էր ի սկզբանէ միով աս-
տուածութեամբն բարձրելոյ։ »

Եւ հրամայեալ Աբգարու թագաւորի տալ Ադդէի առաքելոյ արծաթ և ոսկի և պարգեւս բազումս։ Ասէ ցնա Ադդէ. «Զ՝ի ամրդ կարասցուք առնուլ զոր ինչ ոչ է մեր. զի ահա որ ինչ մերն էր՝ թողաք ըստ պատուիրանին Տեառն. զի առանց քսակի և առանց մախաղի բարձեալ զնաչ ի վերայ ուսոց մերոց հրամայեաց մեզ քարոզել զաւետարանն իւր ընդ ամենայն տիեզերս, այն որ ամենայն արարածք խմացան և չարչարեցան ի խաչելութեան նորա, որ եղեւ փոխանակ մեր ի փրկութիւն ամենայն մարդկան»։ Եւ պատմեաց նա զամենայն ինչ առաջի Աբգարու թագաւորի և առաջի ամենայն իշխանաց և նախարարաց նորա, և առաջի Աւգուստինեայ մօր Աբգարու և Շղամաթեայ դստեր Միհրդաթայ կնոջ Աբգարու՝ զամենայն նշանսն և զսքանչելիսն Տեառն, և զփառաւորեալ զօրութիւն նորա զոր առնէր նա, և զաստուածեղէն զօրութիւնս նորա, և զվերանալ նորա յերկինս առ Հայր իւր. և թէ որպէս առնէր զօրութիւնս մեծամեծս իշխանութեամբ բազմաւ ի ժամ վերանալոյն իւրոյ. և զի նովին զօրութեամբ բժշկեաց նա զԱբգար և զԱբդիւ զորդի Աբդէի զերկրորդ թագաւորու-

լիպպոսիւ և Պետրոս կաթողիկոսիւն Աղ-
ուանից։ Եւ սա եւս այսպէս բարեբախ-
տիկ լեալ յաշխարհի, վճարի ի ՇՃ թվ-
ին. և էառ զիշխանութիւն թագաւո-
թեանն որդի նորին Շահ Սուլէյմանն ի նոյն
ամին. որ և յաւուրս սորա առաւել խաղա-
ղութիւն եղեւ աշխարհի և. շինութիւն ա-
ւերակաց, և բազմամարդութիւն երկրի,
ուղղութիւն և իրաւունք դատաւորաց,
ջախտաւորութիւն հարկապահանջութեանց,
և բարեկարգութիւն ամենայն գործոց և
արարողութեանց։ Սա եւս այսպէս կառա-
վարեալ զերկիր և զհնազանդեալս իւր՝ վախ-
ճանի ի ՇՃԼԹ թուին։ Զինի որոյ թագա-
ւորէ որդի սորին Շահ սուլդան Հիւսէինն
կոչեցեալ՝ ի ժամանակի մերում, ի տիս տը-
զայութեան գոլով ի ՇՃԽ թուին։

Արդ՝ զոր ինչ մինչեւ ցայս վայր եղեալ
էր՝ ի նախկին գրոց պատմութեան, մանա-
ւանդ ի գրոցն Աբաքել վարդապետի ծաղ-
կաքաղ արարեալ հաւաքեցաք, որում Տէր
ողորմեացի. յետ այսորիկ պարտիմք ի ներկայ
ժամանակս այս՝ յորում կամք, գծագրել
սատ. և Քրիստոսի փառք յաւիտեանս.
ամէն։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Վ.ՐԴՈՎՄԱՆ և խանգարման ԲՈՒԳԱՈՐԾՈՒԹԵԱՆ ԲԻԵԱՆՆ ՊՈՐՍԻՑ։

Ի տասներորդ ամի թագաւորութեան իւրում Հիւսէին կոչեցեալ Շահ սուլթանն սրտի հրամանն մարդաթիւ և աշխարհագիր առնել ազգիս Հայոց, և ամենայն ազգաց ընդ իշխանութեամբ իւրով եղելոց. և ելեալ հրամանատարքն նորին արք իւրաքանչիւր հաւատարիմք տան նորա՝ գրիչք և քարտուղարք, զի անսխալ և առանց թագուցանելոյ գրեսցեն զամենայն հասակ ի հնգետասանամենից և ի վեր, սպառնացեալ ի հրովարտակին՝ այսպէս. «Լցթէ ոք գտցէ զթագուցեալ և զլծեալ ոք, և յայտնեսցէ զայն արքայի, գլուխ ղօղելոյն՝ արքայի, և ինչք նորա աւար այնմ լիցի՝ որ գուշակեացն»։ Որ և արարին խակ. զի յոյժ յուզմամբ. և օրինամբ զնեալ տեղեկանային սէսպէս հնարիւք և սպառնալեօք։ Ի գիւղի ուրումն զտանուսէր գիւղին և զքահանայն և զհիւրընկալն՝ զոր գՂէր ասեն, արդելուին ի տունս ուրոյն և զատ ի միմեանց, և ապա ասել տային զանուանս արանց եղե-

ոց ի գիւղին և գրէին, և բերեալ ի մի վայր՝ հաւասար տեսանէին. և թէ աւելի կամ պակաս գտանէին ասացեալքն ի միմեանց, (և զի թուղթ եւս առնուին ի բերանոյ նոցա, այսինքն մուչալիա, զի թէ սուտք գըտցեն, այնքան տուգանս վճարեսցեն,) կաւխելով ի փայտէ բրածեծ առնէին զարան ասացեալ ի սակս տուգանին. ընդ նմին կաշառս յոլովս և տատանորդս, և զկարգեալ վարձս զինուորացն առաւել քան զչափն առնուին, և ապա զգրեալն կրկնէին։ Այսպա յետ այսորիկ գրեցին և զվանորայս զանապատս և զդիւզօրէից եկեղեցիսն. ընդ նոյնմին և զեպիսկոպոսունս և զքաղեղայս, և զերիցունս առհասարակ ի թիւ արկին. և աւարտելով զնոսա սկսան գրել և զվանականսն, զճանապարհորդսն, և զոր սուղ ինչ առեւտրոյ տեարքն էին. և զամենեսեան ի համարաթիւն գրելով՝ տարեալ ցուցին ատենի արքային։ Իսկ անդ եղին հարկս ի վերայ գրելոց գլխոյն՝ երեքպատիկ յաւելմամբ ի վերայ առաջնոյ սահմանին. և ի վերայ եկեղեցական պաշտօնէից որ յառաջնումն ոչ երեւէր բնաւ, տատնապատիկ առաւել քան աշխարհականաց ծանր բեռինս եդին. և զոյն աշխարհագրութիւն հաղիւ

մինչեւ յերիս ամս աւարտեցին. զի ի ռճիր թուին սկսան եւ ի ռճծա թուին հրաման արարին զերեք տարւոյ զգլխահարկ ժողովրդեանն՝ զոր նոր եդին (հաւաքել). նաեւ վասն եկեղեցականաց և կրօնաւորաց կարգեալն ընդ նմին միահաղոյն առնուլ Պապ եւ մեծ վէճքն Պորպատականի որ նստէր ի Դաւրէժ քաղաքի, որոյ անուանն էր Մնրզաթահիր, հաղար հարիւր արամբք, և եկին յերկիրս Դարաբաղու և ի Դանջայ քաղաք. և ընկաւ առնուլ յոյժ աւելորդ քան զգրեալն։

Եւ ցրուեցան զօրքն ընդ երկիրս և ընդ գիւղօրայս ի թիւ արկեալ գրոցն. և քանզի յոյժ ծանր էր լուծն և ոչ կարէին տանել, վասն որոյ չարչարէին և կեղեքէին, և ջարդելով առնուին ըստ չափու իւրեանց ի յուլովիցն՝ յոլով, և ի փոքրունցն՝ փոքր. զի (մեծ) գեղն հարիւր յիսուն, հարիւր, կամ յիսուն թուման. և յոյժ փոքրն յերեսուն և կամ ի քսան թուման է էր պակաս։ Նոյնպէս ի վաճառականաց, և յամենայն արուեստաւորացն առին։ Եւ այսպէս ամի ամի զգլուխն համարէին, և հարկահանքն եկեալ ճշդիւ առնուին։ Յետ այսորիկ միւս եւս կերպիւ հարկս եդին, և անուանեցին զայն Պիչորան. դարձեալ միւսանգամ եւս ե-

գին, և զոյն ասացին Շահզատի ախրաջի. միւս եւս յաւելին, և անուանեցին Շէշ-փինար, և զայս երեքպատկեցին։ Եւ դարձեալ կրկին եւս եղեւ հրաման ելանել և գրել զամենայն սահմանս երկրի, գիւղաքաղաքից և ագարակաց, զհողս, զջուր, զայգի, զանդաստան, զծառ, զտունկ, և զամենայն ինչ որ պիտոյ է մարդկան՝ առ հասարակ զամենայն գրեցին, թէ Հայոց, և թէ այլազգեաց, այլ և վանականաց, և իշխանաց. ազգ մի որ Թարագամայ ասեն, զնոցին եւս զանդեայս և զհօտս, և զլակս, և զջուրս, և զերան ամենայն անասնոց ջրքաստանեաց ի թիւ արկին, և յառաջնոյն վերայ կրկին յաւելին զհարկս։

Այս ամենայն զոր գրեցաք՝ նորահնար ջարիք էր, զոր եդին ի վերայ առաջնոյ սահմանեալ հարկացն, որ և առաջինն եւս ծանրագոյն էր բեռն ի վերայ ժողովրդեան. այժմ փոխանակ թեթեւացուցանելոյ, զայսքան եւս յաւելին ի վերայ։ Եւ դարձեալ՝ որպէս սովորութիւն է Պարսից իշխանութեան՝ յամենայն քաղաքս տէրութեան իւրեանց, և ի վերայ ամենայն երկրի, պետս և գլխաւորս զորաց կացուցանել, որպէս Խան, Սուլդան, Պուլուկի, Վէզիր, Դա-

բուզայ, և Թուխլատար։ Յառաջնումն որոց միանգամ այսպիսեացս իշխանութիւն ինչ տային, ոչ դիւրեաւ փոփոխէին և առնուին ի նմանէ. բայց թէ մեծ յանցանք ինչ և կամ ինեաս առնն յայտնիւր, և կամ վասն զրկողութեան և ագահութեան գանգատողք և դատախազք երթային ի դուռն արքայի, և զյանցանս առնն յայտնի կացուցանէին, և ապա հաղիւ ուրեմն առնուին յառնէն յայնմանէ զիշխանութիւնն զայն։ Իսկ այժմիս և այսու թագաւորաւս ոչ այսպէս, այլ թագաւորն և նախարարքն իւր կաշառակուր լեալ՝ փոյթ ընդ փոյթ փոփոխեալ հանէին. և ի միում ամի երկուս և երիս տեարս և իշխանս՝ ի միում քաղաքի և գաւառի զկնի միմեանց առաքէին։ Յետ նոքա եկեալ՝ որպէս և ինքեանք կաշառօք ըստացեալ էին զիշխանութիւնս իւրեանց, նոյնպէս և նոքա այնպէս ամենայն զդատ և զկրաւունս ժողովրդեան ի բաց եդեալ՝ կեղեքէին, կողոպտէին զհնազանդեալս իւրեանց. սոյնպէս առնէին և օրինապահք դպիրք նոցա, այսինքն դատաւորք Շ՝խալըսլամք, շէյխք, և որոց Ղ՝ազիս ասեն։

Ղորձեալ յաւելին միւս ևս չարիս, զի որ միանգամ տեսլք էին գիւղից և ագարակաց.

նաեւ վարձաւորք՝ այսինքն ծանրաղ հատեալ, զօրապետք և զօրք սրքան դրամոյ չափ որ ոք և ունէր, զնորին տասանորդն եւս հատին, և թագաւորական արարին. իսկ նոքա ոչ յիւրեանց դրամոցն տային, այլ զայն եւս յաւելին և եդին ի վերայ իւրաքանչիւր հնազանդելոցն, և այնպէս առնէին։ Նմանապէս և այլ բազմահոյլ չարիս յորդեցին. ուստերս և դստերս ուժգին քարշելով, զարրս և զկանայս բռնի ուրացուցանելով, և զյեռամնացելոց զինչն և զստացուածսն և զգանձս յափշտակելով՝ և ուրացողացն տալով. որպէս և սրքան տօվլաթաւորս և մեծատունս աչօք մերովք տեսաք ի Ղ.ուզայ և Ն.ղրեւան՝ որ ի վերջին աղքատութիւնն և ի թշուառութիւնն հասեալ էին. և հարցեալ զպատճառն տեղեկացաք, որ վասն ուրացողացն և յափշտակութեան ընչից իւրեանց էին եղեալք այնպէս։ Ն.յնպէս զամենայն բարեկարգութիւնս բարձին յերկրէ, զորս մանրամասնաբար ոչ գրեցաք. միանգամայն և օրէնս եդին իւրեանց. իսկ գտան հակառակ՝ փոփոխելով զեղեալ սահմանս նորա, զոր վասն գլխահարկաց և դատաստանաց եղեալ էր ի վերայ նոցա։ Վասն այնորիկ եհաս և ի վերայ նոցա իրաւունք

արդարադատին Աստուծոյ, այլ և ի վերայ ազգիս Հայոց. եւ զոր յապագայն գծագրելոց եմ, սակայն նոցին անոգորմ և անաստուած գոլոյն կեղեքելոյն և կողոպտելոյն զկեանս տառապելոցն, զորս վոչքր ի շատէ ծանուցաք։ Իսկ յաղագս անօրէնութեան օրինազանցութեան, սուտութեան և անմտութեան և անմիաբանութեան սոցա, միանգամայն և ընդդէմ դառնալոյ Աստուծոյ և աստուածային գրոց և պատուիրանացն՝ զոր և ծանուցի ձեզ Աստուծով, որ եղեւ պատճառ կործանման ինքեանց, յորմէ Տէր Յիսուս ազատեսցէ. և նմա փառք յաւիտեանս. ամէն։

ԳԼՈՒԽ Դ.

Վասն հոգեւոր և ընդդիմակային՝ որ ի թեղէս թեղէս յորեան ընդդէմ Բաբելոնի Պարսից։

Քանզի ըստ նախագուշակութեան սրբոյ մարգարէին Դանիէլի և ըստ լրման ժամանակի տեսլեան նորին, որպէս և կարծի ի բազմաց իմաստնագունից վասն տասն եղջերաց խոյին նշանակ յառնելոց տասն թագա-

ուրաց յազգէն Պարսից, որպէս թիւ համարոյ սոցին է. և կամ թէ ըստ կամաց նախախնամութեան Աստուծոյ, որ զերրաւունս հատուցման իւրոյ, իբրեւ զքաժակն ի ձեռին ունի՝ և ում կամի արբուցանէ զնա. և տէր է թագաւորութեան մարդկան և երկրի, որում և կամի՝ նմա շնորհէ։ Այս որում և այժմն է տեսանել. և զի եղեւ ի ժամանակս սոյն ուրդան Հիւսէին թագաւորիս, ազգ մի ի կողմանս Խորասանայ և Պանուահարու, զորս Աղուանք անուանեն. և ասեն վասն ազգիս այսորիկ՝ եթէ են բնիկ ի լեռնաբնակացն Կաւկասու և յերկրէն Աղուանից, որ են ազգաւ Աղուանք, որ այժմ եւս նախկին անուամբն վերակոչին. և լեալ են հաւատով քրիստոնեայք, և ապա զկնի ժամանակաց Լանկթամուրն կոչեցեալ բռնակալ, որ տիրեաց յոլով մասին աշխարհիս յաղթութեամբն իւրով, զոր պատմութիւնքն վկայեն զմանէ, և ասեն վտարանդեալ զազգս զայս ի տեղւոջէ իւրեանց, և տարեալ գքաղաքն և հինգ տուն բնակեցոյց յերկրին յայնմիկ։ Եւ զկնի ժամանակաց դարձաձեալ են ի կրօնս Մահմէտի. և ապա ուռճացեալ և բազմացեալ են, և լեալ իշխանք և ազատք յիւրաքանչիւր մասին, և տիրագրք

լուիք մինչեւ ի ժամանակս Շահաբաս կո-
չեցեալ արքային. որոյ յառնուլն զ՝Անտա-
հար և տիրելն կողմանցն այնոցիկ՝ նուաճին
և ոչ ինդ իշխանութեամբ նորին, և զկնի
որդւոց և թոռանց նոցին մինչեւ ի ժամա-
նակս այս ի ուաճ թիւս մեր. և ապա սկը-
սան աղմկել և վրդովել կողմանքն այնոքիկ։

Այլ և միւս և ս ազգ որ Պլուճ անուանին,
այլ և երկիրն Սոլոխ-Պուլաղու զոր Թաւրք-
մանն կոչեն, և գլխաւոր մի ոստան որ Սու-
լէյման պապա ասէին, որ ասէր զանձնէ գոլ
յազգէ առաջնոց թագաւորացն որք նստե-
ին ի Թաւրէժ շահաստանի Ջահանշահ և
Ղազուպ անուանեալք, նա և յերկիրն Ա-
ստրապատու շրջեցաւ։ Եւ զգլխաւոր նոցին
Աղինաղուրա կոչէին. այլ և լեռնականքն
Կաւկասու, ձիւնաբնակ ազգքն Լեկաց, որ
և Լազկիք՝ և ըստ գրոց Ջանք կոչեցեալք,
և բնական թշնամիք ի սկզբանէ երկրիս Ա-
ստրպատականի, ազգիս Հայոց և օրինաց մե-
ղոց։ Սոքա միահաղոյն և զվերոյ գրեալն
ամենեքեան հեատեալք թիկունս դարձու-
ցին, և ընդդէմ դարձան հրամանաց թա-
գաւորին Պարսից։ Եւ սկսան յիւրաքան-
չիւր երկրէ զշրջակայս և զմերձակայս իւ-
բեանց կողոպտեալ, գերի առնել, և որոյ

Հարտակ տալ. և այս ոչ թէ ի միում ամի, այլ յերկար ժամանակս։ Եւ ապատամբիլ ոչցա սակաւ ամաք, զկնի և կիցն միմեանց եղեն. և թէպէտ թագաւորն զօրս գումարեալ ի ձեռն զօրագլխաց և ապարապետաց առաքէր ի վերայ նոցա՝ բաշխելով և յոլով գանձս, սակայն ոչ ինչ օգտիւր, այլ յաղթահարեալ լինէին. թէպէտ ոմանց բազմաւ ջանիւ և հազիւ ուրեմն դադարեցուցին զխռովութիւնն ոչ այնքան յաղթութեամբ՝ քան թէ հաճելով զմիտս նոցա ըստ կամաց իւրեանց։ Բայց կաց կողմանցն Լանտահարու և Կովկասայնոց յերկարեաց բազում ժամանակս, զոր յիւրում տեղւոջն ասասցուք՝ եթէ Տէր կամեսցի։ Եւ նմա փառք յաւիտեանս. ամէն։

ԳԼՈՒԽ Ե.

Ի՞նչ գործեցին ազգն Հոնաց ընդ ամենայն երկիր Աղուանից։

Օ՛ի յայտնի իսկ է ամենեցուն այս, թէ տուն և կամ այլ ինչ շինուած թէ մեծ թէ փոքր՝ յորժամ հնացեալ փլանելոց լինի,

նախ որմունք և հիմունք խախտեալ բաժանեին, և ապա ձեզուն տանեային ինչանէ. և զկնի այնորիկ ամենայն տանիքն ի վայր ի ջեալ կործանի։ Այսպէս եղեւ և Թագաւորութեան Պարսից. քանզի քնակիչք լերին Կովկասու, որք Լազիք կոչին, յայսմ կողմանէ լերինն՝ ի տեղի որ Ախ, Ռ՚ար, և Թաշա, և այլ գիւղօրայից անուանք յորջորջին, որոց գլխաւոր էր Ալի սուլդան անուամբ, որ նախ հրամանաւ Շահին նստէր։ Այս և այլ յոլովք ինքնագլուխք միաբանեալք ընդ նմա՝ դարձան և ապստամբեցին ի Թագաւորէն ի ռՃկա Թուին, որ և յառաջ քան զայս Ինխեելու երկիրն, այլ և Շաքուա, Պանկատ, Խումպարաք, Զարզիսթալու, և այլ յոլով գիւղօրայք ապստամբեալ և գերեփարեալ էին և աւարի առեալ։ Այժմ եկեալ ի Գանտաք անուն գիւղօրայս՝ խապառ տարան։ Եւ այսպէս գրգռեալ ամ յամէ ապստամբ սիռեալ յայս կողմ և յայն կողմ Կուր գետոյն յերկրին Շաքուայ և Ղարաղու և Ղասանու նահանգին մինչեւ մերձ ի Շամախի քաղաք։ Իսկ յայսմ կողմանէ յոլովք ի նահանգէն Ղազախու, որ է Ախստեւու՝ և ի յերկրէն Ամիրշամ Շատիլուէն որ են Օակամներն։

Նա և ջրս գետն Գանջապատանու՝ այսինքն Շամքոռ, Գանջապատան, Ոսկանապատու ձորն, և Բուրաքպատան. այլ և յոգովք ի գիւղորէից Գարտայու, և զդաշտավայր գիւղոյն միահաղոյն կոտորեալ. գերի և աւարի առեալ ամոյի արարին, և զմնացեալսն փախստեայ ի լերինս և ի գաւրանձաւս Ալցախու, և իւրաքանչիւր հանդէպ ամուր տեղիսն զերծեալք զապրուստս իւրեանց հոգային։ Այլ և ի ռճհ թուին նոյն ինքն Ալի սուլդանն գումարեալ ի վերայ ինքեան զօրս ի նոյն ազգէն Ազկացն թուով ոչ սակաւ քան զուրթ հազար, եկն ի վերայ քաղաքին Գանջայու մինչեւ եմուտ ի պողոտայն (այսինքն Բուլջան,) որ ի կողմն Սուլթանբուլան անուն գեղջն, թոյլ տալով քաղաքացւոցն։ Եւ յորժամ մտին ի ներսն, տարա յարեան քաղաքացիքն և կալան ասոյ և անոյ զանցս գնացից նոցա, և կոտորեցին ի նոցանէ մինչեւ ի հազար քսան և մի ոգիս աւելի կամ պակաս, և ոչ ինչ կարացին առնել. այլ յետս դարձեալ ամօթով գնացին ի տեղիս իւրեանց։

Եւ այսքան իրս զոր ասա գրեցաք ի մէնջ, յուրթ և յինն տարի գործեցաւ, լուկեալ ի ռճկ թուէն։ Եւ որքան հրաման

եղեալ ի Թագաւորէն գնալ զօրացն Պարսից ի վերայ նոցա, այսինքն բնակելոցն ի քաղաքն Շամախու և Գանջայու և ի շրջակայս նոցա. և խանքն ոչք նստէին անդ, ոչքան ջանացին՝ բնաւ ոչինչ կարացին դիմակայել, մանաւանդ թէ յաղթահարեալ կոչուցան առաջի նոցա. որպէս և Հասան ալի խանն Շամախու հնգետասան հազար զօրօք գնաց մինչեւ ի սահմանս նոցա. և նոքա յաւուրսն պահուն յանկարծօրէն հասին ի վերայ նոցա և զյոլով մասն զօրացն կոտորեալ՝ զխանն եւս սպանին, և մնացեալքն փախչուստեայ դարձան։ Այլ և սպարապետն Շամքորու, Օղուրլու խանն Գանջայու ել ընդ առաջ նոցա և ընդ կրուանին փախուստեայ դարձաւ, և եմուտ ի Գանջայ։ Այլ և Թիֆլի խան անուն ոմն իշխող Շաքուայ՝ սուղ ինչ ժամանակ ընդդիմացաւ նոցա, զնա եւս սպանին։ Իսկ ի վերայ այսր ամենայնի ազգս այս ժալիրհ առաւել եւս համարձակեցան, և ապա ձեռն ամբարձին ի վերայ երկրին Կախեթու և ազգին Վ՚ջաց. որ և նախ քան զայս քանիցս անգամ ուժգնութեամբ բախեալ էին ընդ միմեանս, և հեղուն արեան ոչ սակաւք արարեալ երկոցունց կողմանց. որպէս և Իմամղուլի խանն

Կախեթու մի անգամ և երիցս փոխուցին ի պատերազմէ, և աւարի առին զամենայն կահ և կարասի նորա։ Եւ այսպէս յառաջ խաղալով ամ յամէ աւերեցին զամենայն երկիրս նորա, մինչեւ ի Հայրենի Թագաւորանիստ տեղին իւրեանց, և զեպիսկոպոսարանն ի քաց Թոզեալ՝ ի յամենայն Թուշայ ներանցն ելին։ Եւ սոցին այսպէս և այսքան ժպրհելոյն միւս եւս դոյ պատճառ, զոր այժմ գրեցից։

Քանզի յերկրին Հիրուանու ի նահանգին Պապալու դոյ իշխանութիւն ազգի մի՝ որ Անէմեասկանի զոր Անէլիք անուանեն, ի գիւղն Ղուրթղաշին կոչեցեալ՝ Պարասու անուանեալ տեղին։ Եւ երեւի Թէ սոցին եղեւ ոմն Անէլիք՝ զոր Անէլիք Անհամմուտ ասէին, այր հանճարեղ և բանիմաստ յոյժ զակ, և յոյժ ագահ քան զՅուդա, և անյագ քան զոզբուկ. սա զբոլոր երկիրն Պապալայու ի բուռն էառ Անախթայիս ի խանէն Համխոս։ Եւ երկիրն էր բարեբեր և ջէն և մարդաշատ, Թէ Հայ ազգաց, որ ի Պարաբազու երկրէն ժողովուրդք յոլովք անցեալ էին յերկիրն այն աւելի քան զտեղականն. և եԹէ այլ ազգաց՝ որ բնիկ յերկրէն էն, յորոց պէտպէս հնարիւք Անէլիքա

այս ժողովեալ մթերեաց գանձս յոլովս և սաստիկս ոսկւոյ և արծաթոյ, և բռնացաւ ի վերայ ամենեցուն. յորմէ վշտացեալ ամենայն ոք տրտունջ եղեն զնմանէ, որպէս և Հայ ազգն Պողերուն ժողովեալ ի դուռն իւանին, և ազդ եւս արարին արքային։ Զի սմին Խարսեղ անուն քահանայ, որ էր բնիկ Պարապարու՝ յերկրէն Խաչենաց, և ի յաղագէ Անելիքայ, էր անդ, որ ընդ գնալոյ ժողովրդեանն սոքա եւս ազգաւ գնացեալ էին՝ և զՍոկութլու գեղն նորոգ շինեալ և բնակեալ որ և քան զայն՝ այլ առաւել ոչ գոյր ի մէջ գիւղօրէիցն։ Զսա առեալ յղեցին Հնդկաստան ի դուռն արքայի, զի ի վերայ ինքեանց արասցէ զիշխանութիւն Անելիքութեան ազգին Հայոց՝ որ անդ, իբր գոլով յաղագէ Անելիքայ։ Որ և գնացեալ ըստ կամաց իւրոց առեալ հրաման յարքայէն՝ եկն. բայց սատխին իւր բռնութեամբ էր, ոչ կարայ ընդդիմադրութեամբ կաշառաւոք կուրացոյց զաչս բռնաւորին Շամախու, և ոչինչ արարին զքանն երիցուն։ Զսա ոմն կալան ընդ նմա մեծամեծքն Շամախու. այլ և ի իսանէն ապատամբեցան, և գնացին առ Թագաւորն զկանն ձգեցին յիշխանութենէ, և զԱնելիքէն տրտունջեցին առ Թագաւորն, եթէ յոլով գանձս ժողո-

վեալ է, և կամի ապստամբիլ ի քէն։ Այլ արար հրաման զամենայն ինչսն զգայուն և շարժուն՝ որ ինչ և իցէ՝ ի գիր ձգել, և առնուլ (ի գանձն) թագաւորական. և զինքն իւրայնովք ի բանտ արկանել. որ և արարին իսկ։ Այլ եկեալ դահիճք արքայական ի գիր և ի պաՀ ձգեցին զսուն և զինչս Մեղեքին. և զինքն ընդ եղբօրն, որոց անուանն Ահմատ կոչիւր, կապանօք տարան ի քաղաքն Շամախի, և արկին ի բանտ ամիսս ինչ. և գտրձեալ տրձակեալք անտի՝ կրկին կարգեցան յիշխանութեան իւրեանց։ Այլ ինչք տոցին զոր առին յարքունիս, ասէին զմիւս ոսկւոյն և արծաթոյն լինիլ իրրեւ եօթանասուն հազար թուման, զատ ի յայլ կահից և կարասեաց, և չորքոտանեաց և մկրեցաց, որոց ոչ գոյր թիւ։ Բանզի ասէին լինիլ ամս ջրաղաց հինգ հարիւր. փինդ որսոյ զբերինձն զսուն՝ հինգ հարիւր. ջոՀ և մաջինակ որ զասպիրշուանն քարշեն՝ հինգ հարիւր. գեաք և առուք զոր ոչխ ասեն՝ ի վերայ արարիչ և արմատեաց երկրագործութեանց՝ յոլովք. և զայլն մնաք նկատեսցես փարթամութեան առնս։

Դարձեալ զկնի սակաւ ամաց անցելոց ի վերայ այսոր ամենայնի, Հիւսէին անուն ո-

մին խան Թամախու՝ կրկին ըմբռնեաց զսո-
սա երկոսին եղբարսն հրամանաւ Թահին, և
գլխատեաց. և ապա ի ձեռն առեալ զերե-
սին որդիս նորա զոր Փէյքար, Իպրահիմ, և
Պասում ասէին, յոյժ չարչարանօք և խոշ-
ասանգանօք ետ հանել և զմնացորդս ընչից,
զոր ասէին քան և հինգ հազար թուման.
այսքան եւս այժմս առին և թողին զնոսա։
Այլ Փէյքար անուանեալն գնաց առ Թա-
հին, և առեալ զՄէլիքութիւն՝ եկն ի տեղի
իւր, և վարէր ըստ հայրենի սովորութեան։
Որ և զկնի չորից ամաց միւս եւս Հիւսէինն
անուն խան Թամախու, ետ գլխատել զՓէյ-
քարն ի տան իւրում, և ապա զսուրն, ըզ-
կանայս և զորդիս և զամենայն ինչն իբրեւ
ի գերութիւն վարեալ ածին ի Թամախի.
զկնի որոյ զնեալ և որոնեալ զամենայն զոր
ինչ և ունէր, զայն եւս առին և որսային ար-
քունիս. որ և զհամար ընչից սորին եւս ասա-
ցին գոլ աւելի քան զքսան հազար թուման։
Բայց եղբարք սորին Իպրահիմն և Պասումն
փախստեաց գնացին առ Էլի սուլդանն վերոյ
յիշեալ. և անտի անցին յայն կողմն լերինն
առ մեծամեծս ազգացն այնոցիկ Լազկեաց։
Օ՛ի որպէս ասեն՝ երկուս կրօնս ունիլ Մահ-
մետականաց, ոմանք Թիւրք կոչին՝ որ են

Պարսիկք և Ղըզլպաշք, և ոմանք Սունիք՝ որ են Օսմանցիք, և այս լեռնականք և Աղուան ազգն Ղանտահարու, և Օզպէկք, և Պուխարացիք, և Աբաբացիք, և այլ յոլովք որ ընդ տիեզերս կան կրօնիւքս այս. և վասն այն գնացին սոքա առ Ղազկիսն, վասն զի ընդ նոսա միակրօնք էին, և ասեն թէ բուկոսն և բացագլուխս շրջեցան ի դրուանս նոցա վասն նախատանաց իւրեանց՝ զոր կրեցին ի ձեռաց Շահիցն. քանզի այսպէս է սովորութիւն տեղւոյն։ Եւ այսպէս շրջիլն նոցա ի նախանձ դրդեաց զնոսա, և շարաց ցան քան զդպան կատաղի. և յոյժ ամօթ համարեցան ինքեանց այնպէս լինիլն նոցա. և ձայն տուեալ միմեանց՝ միաբանեցան և խրախուսեալ ժողովեցան ի մի վայր բիւրք բիւրուց և հազարք հազարաց. քանզի միշտ ելէին ասպատակ յոյսմ կողման եղելոց Ղազկեացն՝ զոր նախ յիշեցաք, և նոքա եւս խորհեալ էին գալ և խառնել ի սոսա։ Որպէս և յանցեալ ամին Սուրմայ անուն գլխաւոր նոցա եկն մինչև ի Վրաց տուն. անցեալ ի ներքոյ Լոխեթու և Ծիխիսու ասպատակեաց զգաւառն զոր Սոմխէթ և Ղուռնախ ասեն։ Իսկ այժմ ասկս վերոյ ասացեալ պատճառին ի ազգս թուին օգուտ

տոսի տան, գրոհ տուեալ առհասարակ միահաղոյն ազգս այս Լ ազգիք, ամենայն գլխաւորք իւրեանց որք էին այսոքիկ, նոյն վերոյ ասացեալ Սուրխայն, Շամխալն, Խանին, հաճի Գովլութն և Ալի սուլդանն, ամենայն զօրութեամբ իւրեանց եկին ի վերայ քաղաքին Շամախու, և յաւուրս ութ սաստիկ կռուեցան, և ոչ կարացին առնուլ։ Այլ և համբաւ եւս եհաս առ նոսա ի հեռուստ, իբր թէ յոմանց յետագայից իւրեանց աղմկեալ էին զերկիր նոցա. վասն որոյ յանկարծակի ի գիշերի միում դարձեալ դարձան ի տեղիս իւրեանց։ Եւ ապա քաղաքացիքն Շամախու սկսան ամրացուցանել զկողմանս քաղաքին ցանկով և խորագունիւք, և շրջապատ որմովք։ Այլ և զօրք եւս հասին ստոր և անտի, (այսինքն Գանջայու և Գարաբաղու և Սղանու.) այլ հրամանաւ Շահին եկին նոր խան քաղաքին, որոյ անունն էր Հիւսէին խան Ալգուլեցի։ Եւ զայն ամն պահեցին զքաղաքն մինչեւ ի գալ միւս ամին ի նոյն ժամանակն և ի նոյն ամիսն։

Գարձեալ եկին վերոյ յիշեալ լեռնականքն քան զառաջինն յոյժ ամբոխիւք, և սպառազինեցան առժգնութեամբ զաւուրս

աւուրց ընկալեալ զբանս նորա, և հաւատացեալ յաւետիս քարոզութեանն Քրիստոսի։ Եւ իբրեւ ասաց զայս ամենայն Աղդէ առաքեալ առաջի ամենայն քաղաքին Ուռհայի, և եաւեա Աբգար Թագաւոր թէ ամենայն քաղաքն ուրախ եղեւ ընդ վարդապետութիւն նորա, արք և կանայք ի միասին. և ասեն ցնա. "Ոչմարիտ և հաւատարիմ է Քրիստոս, որ առաքեաց զքեզ առ մեզ"։ Եւ նա իսկ Թագաւորն եւս առաւել ուրախ եղեալ յայսմ՝ յոյժ փառաւորէր զԱստուած. զի որպէս իւր լուեալ էր յաղագս Քրիստոսի, նոյնպէս տեսանէր զզօրութիւնս և զզարմանալիս զոր առնէր Աղդէ առաքեալ անուամբն Քրիստոսի։ Եւ ասէ ցնա Աբգար Թագաւոր, թէ "Որպէս յղեցի ես առ Քրիստոս ի Թղթին իւրում (32), և որպէս նա յղեաց առիս, և ընկալայ ես ի քէն այսօր, նոյնպէս հաւատամ զամենայն աւուրս կենաց իմոց. և ինձմէն կամ ինամ պարծելով։ Բանդի ի միտ առեալ իմ եթէ չէք այլ զօրութիւն որ առնի անուամբ իւրով նշանք և սքանչելիք, բայց միայն զօրութեամբն Քրիստոսի զոր առնես դու մեզ ստուգութեամբ (33)։ Եւ արդ այսուհետեւ նմա երկիրպագանեմ ես, և

Անանու (34) որդի իմ և Աբգոստինէ և Շա-
ղամաթէ թագուհի։ Եւ արդ ուր և կամիս
դու շինեա եկեղեցի ժողովրդանոց՝ որոց և
հաւատացին և որք հաւատան բանից քոց.
և որպէս հրամայեաց Տէրն քո՝ եղիցես պաշ-
տել համարձակութեամբ յամենայն ժամու.
և որք կամին լինել ուսուցիչք և քարոզք
աւետարանիս այսորիկ, պարգեւս մեծամե-
ծըս շնորհեմ նոցա։ Եւ այլ ինչ գործ մի
լիցի՝ բայց միայն պաշտօն. և ամենայն որ
ինչ միանգամ պիտոյ է քեզ ի պէտս եկե-
ղեցւոյ, ես տաց քեզ անհամար. և որպէս
բան քո ասիցէ և իշխէ ի քաղաքիս յայսմիկ,
նոյնպէս առանց նուիրակի մոցես առ իս
համարձակութեամբ յապարանս պատուոյ
թագաւորութեանս խնդ»։

Եւ էջ Աբգար թագաւոր յարքունա-
կան յապարանս իւր. և ուրախ եղեւ նա
մեծապէս հանդերձ ամենայն իշխանօք իւ-
րովք Աբգուսու և Գարմուսու և Շամշա-
գրամու և Աբուբա և Մինհրդաթա, և ա-
մենայն (35) որ միանգամ տեսին աչօք իւրեանց,
և լուան ականջօք իւրեանց. և ուրախու-
թեամբ սրտից իւրեանց փառաւոր առնէին
զ՝Աստուած որ դարձոյց զմիտս նոցա առ ին-
քըն։ Եւ իբրեւ ուրացան նոքա զկրօնս հե-

թանուութեանն յորում կային, և խոստովան լինէին յաւետարանն Քրիստոսի։ Եւ շինեաց անդ Աղդէ զեկեղեցին, և մատուցանէին ի նմա զուխտս և զպատարագս իւրեանց ինքեանք և բազմութիւն քաղաքին. և անդ փառաւորէին զԱստուած զամենայն աւուրս կենաց իւրեանց։

Եւ մատուցեալ առ Աղդէ Աբիդա և Խարքազաբա որ էին գլխաւորք և հրամանատարք քաղաքին, որք զգեցեալ էին զկոյրս արքունական, և հարցանէին զնա վասն գաղտեանն Քրիստոսի զի պատմեսցէ նոցա, թէ զիա՞րդ իբրեւ զԱստուած էր նա, և երեւէր նոցա իբրեւ զմարդ. կամ ո՞րպէս կարող էիք հայել յերեսս նորա։ Եւ նա զամենայն ինչ ցուցանէր և ուսուցանէր և հանդուցանէր զչարժուն միտս նոցա վասն ամենայնի զոր տեսին աչք նոցա և լուան ականջք նոցա ի նմանէ. Եւ զամենայն ասացեալս մարգարէից վասն Քրիստոսի կարգէր առաջի նոցա, և ընդունէին զբանս նորա քաղցրութեամբ և հաւատովք. և ոչ որք էր որ ընդդէմ դառնայր նորա, քանզի ոչ թողուին առաքինութիւնքն զոր առնէր նա՝ թէ որ դիմահար լեցի նմա։

Ա՛ՍՏ Շաւիդա և Աբեթնաբու գլխաւոր

քրմապետք քաղաքիս այսորիկ հանդերձ Պե-
տրոսիւ և Յանկովաւ ընկերօք իւրեանց, իբ-
րեւ տեսին նոքա զնշանսն զոր առնէր Աստ-
ուծ առաքեալ, ընթացան նոքա և խլէին
զբազինսն յորոց վերայ զոհէին Լսբուսայ և
Իսկայ Աստուածոց իւրեանց, զբազինսն մեծ
որ ի մէջ քաղաքին. և աղաղակէին ասելով,
թէ "Ոչմարիտ աշակերտ է սա Պարդոպե-
տին մեծի լուսաւորելոյ և փառաւորելոյ,
զորմէ լսէաք զոր միանգամ առնէր յաշխար-
հին Պաղեստինացւոց։ Եւ ամենեքեան որ
հաւատացին ի Քրիստոս՝ ընդունէր զնոսա
Աստուծ առաքեալ, և մկրտէր զնոսա յանուն
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Եւ ոչք
միանգամ քարանց և փայտից երկիրպագա-
նէին, գայլն նստէին առ ոտս նորա ուսա-
նել և խրատել ի նմանէ, զի հեռացին ի
գարշելեացն և ի հեթանոսական մոլորու-
թենէ։ Եւ Հրեայքն գիտակք օրինացն և
մարգարէից՝ կտաւավաճառք, և նոքա հա-
ւանեալք աշակերտեցան խոստովանելով
ի Քրիստոս, եթէ նա է որդի Աստուծոյ կեն-
դանւոյ։

Այլ ոչ ինքն Աբգար թագաւոր և ոչ
Աստուծ առաքեալ նեղէին զոք, թէ բռնա-
դատելով զոք հաւատացէ ի Քրիստոս (36).

քանզի առանց բռնութեան ուրուք՝ բըռ-
նաւթիւն նշանացն և աքանչելեացն նե-
ղէր զնոսա հաւատալ ի նա. և սիրով ըն-
դունէին զվարդապետութիւն նորա ամե-
նայն աշխարհն Միջագետաց և ամենայն
կողմանքն որ շուրջ զնովաւ։ Բայց Ադդէ
կերպասապատած և խոյրաքանդակ թագաւո-
րին և Փղոտ և Բարշզամա և Բարսեմիա
հանդերձ այլովք ընկերօք իւրեանց յարե-
ցան նոքա Ադդէ առաքեալ, և ընկալաւ
զնոսա հաղորդելով ընդ իւր ի պաշտօն և ի
վարդապետութիւն։ Եւ իբրեւ ընթեռ-
նուին նոքա զհին կտակարանն և նոր (37).
և զմարգարէական գիրս և զգործս առաքե-
լոցն ամենայն ժողովրդեան եկեղեցւոյն. և
պատուիրէր նոցա Ադդէ զգուշանալ նոցա
յամենայնէ զի լիցին սուրբ մարմնով իւ-
րեանց և պարկեշտք հոգւով, որպէս վայե-
լէ մարդոց սրբոց, որք կան առաջի սեղա-
նոյ Աստուծոյ։ "Եղերուք, ասէ, հեռանալ ի
սուտ երդմանէ և յամբարիշտ պանծանէ և
յանօրէն վկայութենէ. և որ ի շնութիւնս
խառնակեալ են, և ի կախարդաց յորոց վե-
րայ չլինի ողորմութիւն, և ի խտրոց և ի
կիւսից և ի վոհկաց և ի բախտից և ի ծնընդ-
դոց, որովք պարծին Հաղդէացիք մոլորա-

կանք, և յաստեղագիտութեանէ և ի մշակա-
շէից (38) յորս յուսացեալ են յիմարեալքն։
Եւ ի բաց արարէք ի ձէնջ զանկնառութիւն
մեղաց և զկաշառս և զպատարագս որով
պարտաւորին արդարք, և կուրացուցանեն
զաչս առողաց։ Եւ ի պաշտամանդ յոր կոչե-
ցարուք՝ մի եւս լիցի ձեզ վաստակ, այլ
զի Տէր է հանդիսատ պաշտաման ձերոյ զա-
մենայն տուրս կենաց ձերոց։ Եւ եղիցիք
փոյթք ի մկրտել. և մի սիրէք զբահս աշխարա-
հիս այսորիկ. և եղիցիք առնել դատս արդա-
րութեան և տուգութեան (39). և մի լինիք
գայթակղութիւն կուրաց, դուցէ հայիցի
ի ձեզ ակն (40) այնր որ ի բաց զկոյրս՝ որպէս
տեսաք մեք։ Ամենայն ոք որ տեսանէ զձեզ
այսուհետեւ, ի միտ առցէ՝ թէ կատարիչ
էք դուք ամենայնի որոց քարոզէքդ և ու-
սուցանէք »։

Եւ պաշտէին յեկեղեցւոջն զոր շինեաց
Աղդէ առաքեալ բանիւ և հրամանաւ Աբ-
գարու թագաւորին։ Եւ էին նոքա մատա-
կարարք թագաւորին, և նախարարաց իւ-
րոց ի պէտս եկեղեցւոյ և ի տուրս աղքա-
տաց։ Այլ ժողովուրդ բազում ժողովէին
օր ըստ օրէ, և գային յաղօթս և ի պաշտօն,
և շինէին ի հնոց կստակարանաց և ի նորոց

ջոլերս խաշանց և արջառոց և ամենայն ջոր-
քոտանի անասանց, և միահաղոյն խառնեալ
վարեցին զառ ի վայր ընդ գետն Խաչինու.
զգերին և զանասունն ընդ միմեանս խառ-
նեալ էին իբրեւ զհեղեղ յորդ, և որպէս
զբանակ մեծ ի գնալն իւրեանց. զոր և մեք
աչօք իսկ նկատէաք. քանզի փոխատեայ հա-
սեալ էաք ի կատար լերինն որ ի վերոյ է
որոյ Ամրոցն Դանձասարայ. և ոչք նոցա
օչ հասին առ մեզ։ Այլ մեք անտի հայե-
ցեալ տեսանէաք զեղելոցն իրագործութիւ-
նն. և այս եղեւ ի ռճՀա թուին, ապրիլ
ամսոյ քսան, յաւուր աշխարհամատոյն կիւ-
րակէին։ Ասատնօր տեսանելի է զաղէտ յե-
տամնացելոց, զսուգ կոտորելոյն, և զաշ-
խարս գերելոյն, զկսկիծ մարդն, և զաղէտ
գերեալ զաւակացն, զողբումն որք մնացե-
լոցն, և զաւարառութիւն ընչիցն, զձայն
բալականացն խառնեալ ընդ վայումն մի-
ջակտուր արանց, «ոդարեւ զբնութիւնս
լերանց և կարծր վիմաց փոխեալ՝ ընդ ին-
քեանս ոգակիս ինքեանց առնէին։

Իսկ զօրք թշնամեացն տարեալ զաւարն
և զգերին խառնեցին ի բանակն իւրեանց.
և չուեալ ի Ականակերտու բանակեցան ի
վերայ գետոյն Դրդու, զոր այժմ Թաք-

թառ կոչեմք ըստ պարսկականին, ի վերայ կամրջին որ Պառի-քորմի ասեն։ Եւ ոչ տեւեցին անդ. այլ և ոչ կարացին այնքան մնասել երկրին Զա աբերդու և Պարաս-յու՝ որպէս մերոյս։ Բանզի նոքա յառաջագոյն ելեալ ի յամուր տեղիս լերանց իւրեանց ամրացեալք էին, մանաւանդ թէ երիտասարդք ոմանք ընդդիմանային եւս, որ և զբազումս հարին ի թշնամեացն. վասն որոյ զաւարն և զգերին ճեպով անցուցին ընդ գետն մեծ Կուր ի կողմանս իւրեանց, և ինքեանք փութացան հասանել ի վերայ քաղաքին Գանձակու։

Յայսմ վայրի ի սոցանե վտանգեալ և նեղեալ մեծ պարոնն Բալպալի-պեկ, տէրն Զարաբերդու և Այնաղին, որ էր թոռն Դարիահղուլի սուլտանին։ Բանզի փախստական էր ի յերկիրն Օսարոյ էր, և անճարակ ելեալ եկն առ սոսա։ Եւ զկնի քանի ինչ աւուր զորդին իւր պատանդ տուեալ, և ինքն գաղտ դարձեալ եկն ի տեղի իւր։ Իսկ նոքա գնացեալ նստան ի վերայ քաղաքին Գանջայու յաւուրս երկոտասան, աւելի կամ պակաս. և ոչինչ կարացին առնել, քանզի ի նեռքուստ ընդդիմանային քաղաքացիքն. և մանաւանդ թէ յառաջագոյն իրաւեկ ե-

զեալ վասն սոցին գալստեան մեծասուն և Ճոխք քաղաքին, գնացին ի քաղաքն Տփխեաց առ թագաւորն Վրաց Վախտանկ, գալ յօգնութիւն իւրեանց. և նա խոստացեալ էր գալ։ Եւ յորժամ մօտ եղեն սուրհանդակքք, և պատգամաւորք սոցա մի զմիոյ կնի ընթանային զկնի նորա. որ և եկին իսկ քառասուն հազարաւ ի վերայ Ազկացն։ Եւ յորժամ եհաս նա յերկիրն Շամքօռու, ոչ ասուի սկսան սրիլ դէպ ի Կուր գետն. և այսպէս մի ըստ միոջէ գնալով ի մէջ երից աւուրց չէք եղեալ կորեան ի տեղիս իւրեանց, և բարձան ի միջոյ։ Իսկ թագաւորն Վրաց Վախտանկ եկն յոլով ամբոխիւ աւելի եւս քան զքառասուն հազար, և բանակեցաւ ի հարաւոյ կողմանէ քաղաքին Գանձակու օգնութեամբն Քրիստոսի Աստուծոյ. որում փառք յաւիտեանս. ամէն։

ԳԼՈՒԽ Զ.

Վասն երկրորդ գալստեան Ռագաւրին Վրաց Վախտանկին ի Գանձայ։

Եւ որպէս պատմեցաք զառաջին գալուստ Վախտանկին յօգնութիւն քաղաքին Գանձակու ի կողմանէ աւարառու-

թեան ազգի Լ՝ազկաց, որ և զնոսա փախըս-
տական արար առանց պատերազմի. և ինքն
ամօրեայ աւուրբ նստաւ մերձ ի քաղաքն։
Իսկ քաղաքացիքն բանտարար եղեն առ նա,
և ասեն. ոչ լինէր գալուստ Լ՝ազկայն առ
մեզ և յերկիրս մեր, եթէ ոչ ի մերձակայից
և ի շրջակայ ազգացս որ զմեօք են համակամ
և միաբան չէին լեալ ընդ նոսա։ Բանզի ի
սատարելոյ սոցա եկին նոքա, վասն զի միա-
կրօնք և համազգէնք և Սունիք են։ Ընդ՝ ե-
թէ դու մեծի Շահին բարեկամ և սիրելի
ես, և մեզ կամեցող, պարտիս և դու զնոսա
գերել աւարել և կողոպտել։ Լ՝ և պատճառ
մի սոցին այսպէս ասելոյն. զի վասն գալըս-
տեան նորին յօգնութիւն ինքեանց, քաղում
և յոլով դրամս խոստացեալ էին նմա, և ի ջը-
տոյն իւրեանց զնոսա, մատնեցին զնա ի ձեռս
նորա։ Լ՝ զի էր յաւուրս գարնան ի յամսեա-
նին մայիսի, ի ռՃՀա թուին, և առ հասարակ
վրանաբնակ ազգքն՝ որ և Թարաքամայ կոչին,
որ խաշնարածք եղեալ էին ի լերինս և ի հո-
վանոցս և ի խոտաւէտ տեղիս ըստ նախնի
սովորութեան իւրեանց, մանաւանդ թէ փա-
խստեայ իսկ էին և նոքա ի յահէ Լ՝ազկուն,
և այժմ ի թելադրութենէ Գանջեցւոց, ո-
ոքոց գլխաւորն էր Ջ՝աւատ անուն խանն, հը-

բաման արար Վ՝ախտանկն զօրաց իւրոց ելա-
նել ասպատակ ի վերայ այնոցիկ յորոց նոքա
ասացին։ Եւ իսկոյն գունդագունդ ելեալ
Մելեկան ազգն Վ՝րաց առաւել անողորմ
քան զԿովկասայինսն. տիրեցան ի լերինս և
ի ծոցակս և յարձակ վայրս երկրի Օ՝ակա-
մու, Շ՝ամքորոյ, Գանջապատանու, Ոսկա-
նապատու, Բուրաքչայու, և Գարտայու.
մինչեւ ի Գուլստան գեղն և ի գետն Դը-
դու։ Եւ թէպէտ սպանութիւն և գերե-
վարութիւն ոչ այնքան արարին, սակայն
զոր ինչ տեսին աչք նոցա, չորքոտանի անա-
ռուն, մինչեւ ի հաւ և ցկատու և ցշուն.
իսկ զանշնչից ոչ է ասելի, զի մինչեւ զփայ-
տեղէն և զպրտեղէն և զխեցեղէն տարան։
Եւ եթէ այս այսպէս, և զի՞նչ գրեցից սա-
կըս պիտոյ և պատուական ընչից և գոյից,
ոսկեղինաց և արծաթեղինաց, և այլ ազգի
ազգի կահուց և կարասեաց. և զի ասելի՞
թէ ի բազմութենէ աւարին, այսինքն պղնձ-
ոյն. երկաթին, և շորեղինին ոչ բաւէին
բեռնակիրք. այլ այլուքն որ ընդ ինքեանս
այնու կրէին ի բանակս իւրեանց, որ էր մերձ
Գանջայու, ի Զօլսկ անուանեալ վայրն։
Եւ զայս ոչ թէ միայն յառաջ ասացեալ
Մահմետականացն արարին. ոչ. այլ ընդ նու-

ոչն խառնեալ և զամենայն գաւառս Հայոց
ի վերոյ գրեալ յերկրէն միահազոյն աւարք
առին զարժուն և զանշարժուն։ Այլ զի լինէր
երբեմն գունդ ինչ զօրացն Վրաց. դիմէ ինն
ի գեօղ ինչ քրիստոնէի, և նոքա քահանայ-
իւք և ժողովրդօք ընդ առաջ լինէին նոցա
խաչիւք, շուրջառօք, զանգակօք, և մոմեղինօք
իբրեւ զքրիստոնէի։ Իսկ Վրացիքն ի վե-
րայ անկեալ կողոպտէին զզգեստսն, և զեկե-
ղեցին, զգիրք, և զամենայն անօթս. զոսկս և
զկանայս, և զամենայն ինչս գեղջն մերկ ի
մօրէ կողոպտեալ և աւարի առեալ գնային.
և այսպէս զամենայն գաւառս և զեկեղեցիս
կողմանցն Վանձակու աւեր և թափուր ա-
րարին յամենայն ընչից, և լցին զբանակս իւ-
րեանց։ Ա՛յլ զլթիւ հօտից և անդէից և առ-
ջառոյ՝ կարէ ասել. քանզի կարգ և սովորու-
թիւն է նոցա յամենայն աւարէ զտասանորդ-
դն տալ գլխաւորին իւրեանց. այժմ ասէին
զբաժին նորա ի յոչխարաց քսան և հինգ
հազար, և յարջառոց ինն հազար, և զայ-
լն մնաց զնեռոցես։ Այլ զի այս եղեւ օ-
գուտ մեզ գալուստ նորին, որ զմնացեալն
ի ժայիր ազգէն Լեզկաց ճառաքաղ արարին
ագահ և անյագ և անսղոյմ ազգն Վրաց։

Այլ գիտելի է, զի թագաւորն Վախտանկ,

ինքն այր բարեսէր, երկիւղած յաստուծոյ, և քրիստոնէասէր և անյիշաչար էր, որ և յոլով անգամ պատուիրէր և սպառնայր զօրացն ոչ առնել այնպէս զքրիստոնեայսն՝ որպէս վասն սպանութեան և գերութեան. իսկ նոքա ըստ բիրտ և սոպռ բարուցն Վրացոց ոչ անսային, և ոչ լսէին հրամանի գլխաւորին իւրեանց։ Եւ սոքա զայս արարեալ, և ապա դարձան ի տեղիս իւրեանց, և մնաց երկիրս մեր անտերունչ և անգլխաւոր, և սկսան մարդիկ իւրաքանչիւր զհաճոյս կամաց և մտաց իւրեանց առնել։ Լուսի և իմ տեսեալ զայս և նկատեալ զի յաւուրս իրին ոչ գոյ նշան խաղաղութեան, որ և էի ի մէջ բանակին Վախտանկայ, ընդ նոսին և ես ուզղեցայ գնալ յերկիրն Վրաց. որ և գնացաք իսկ. և յուզի անկեալ ի Գանջայու ի ռՃհա թուին, մայիսի ամսոյ ԻԸ, մտաք ի Տփխիս քաղաքն, մնալով անդ ամիս չորս։ Եւ ի մտանել աշնան, յամսեանն սեպտեմբերի սկսաւ կրկին դառնալ ի Գանջայ Վախտանկ այսու պատճառաւ։

Գանգի ի նուազիլ միանգամայն և ի ըստորանկանիլ թագաւորութեանն Պարսից, զոր յապայն ասացուք զորպիսութիւն իրին, առաւել եւս բարձրացան թշնամիք նորին

ժանաւանդ կայսերքն մեծամեծք և ինքնա-
կալք Ռուսացն ասեմ՝ որ Սոսկուլու, Պետ-
րոս Թագաւորն և Հռոմոց Կոստանդնու-
պօլեաց տիրող Իսմայէլացին. սոքա յիւրա-
քանչիւր դիմաց սկսան զօրս յարուցանել ի
վերայ երկրին Պարսից. զի Ռուսն օգնել
կամէր Թագաւորին Պարսից, իսկ Հռոմա-
յեցին (օսմանցին) առնուլ Ջանայր յինքն,
ասելով։ Որովհետեւ այլք կամին տիրել կող-
մանցն այնոցիկ, ինձ անկ է առնուլ. վասն
զի յառաջնմէ մեր էր երկիրն Ադրպատական-
նի։ Սակս այսր պատճառի սկսան յերկուց
կողմանց պատգամս յղել առ Թագաւորն
Վրաց Վախտանկ. մին ասելով յիմ կողմն
լիր, և ինձ հնազանդեա. և միւսն թէ՝ Հա-
ւատակից իմ եւ, պարտիս ինձ անսալ և առ-
իս գալ. քանզի պայման ուխտի և ժամա-
դիր եղեալ էր Թագաւորն Պետրոս առ
Վախտանկ, զի յայսմ աշնան ի մուտն հոկ-
տեմբերի՝ ինքնին ի քաղաքն Շամախի հա-
սեալ և զնա անդ ի պատրաստի գտանել
պարտ է։ Յայսմ նուազում Թագաւորն
Պարսից, որ հանդերձեալ էր անկանիլ ի
դահոյից և ի բարձրութենէ իւրմէ, փու-
թանակի հրովարտակ մի հասոյց առ Վախ-
տանկ, եթէ «Բեզ եռաւ զամենայն իշխա-

նութիւն կողմանցդ Գանջայու, և ամենայն Աղրպատականի. և զքեզ կարգեցի գլուխ և սպարապետ ամենայն իշխանացողաց կողմանցդ այդոցիկ. վասն որոյ շնչոտակի զօրս գումարեալ գայցես ի Գանջայ, և պահ կալեալ զդուշացիս կողմանցդ այդոցիկ ի թշնամեաց մերոցդ։ Այս հրաման և ի նմանէ ընկալեալ Վաչուտանկին, մնախսահ եղեալ ի սենեակ սրտի իւրոյ այսպէս, եթէ ահա ստիպիմ ի յերկուց ինքնակալացս, որ և հարկ է զհրաման միոյն կատարել։ Էրդ՝ հոռոմայեցին այլահաւատ և օտար գոլով ի մէջ, կամի բռնութեամբ տիրել երկրի մերում։ Իսկ կողմն այս, զի մին բուն տէրն մեր է, ասինքն Պարսից թագաւորն, և միւսն հաւատակից մեր և քրիստոնեայ կայսր է, մանաւանդ թէ՝ հզօր զօրութեամբ։ Էրդ՝ դիմեալ գնացից ի հրամանս նոցա, և յորոց ի նոցանէ յաջողեսցի ըստ հրամայեալն՝ զոյն կատարեցից։

Եւ իսկոյն հրաման ետան զօրս գումարել, և վաղվաղակի ժողովեալ զբազմութիւն զօրացն ազգացն Վրաց և Հայոց, և ոչ ոք եթող զոր ոչ եբարձ ընդ իւր, ընդ որոց և զիս էառ բերել. զի գնալն մեր անդ մինչեւ ի դարձս այս սիրով ընդունէր զմեզ, և զուճիկն մեր ի յինքեանէ էր հրամայեալ։ Եւ

եկեալ ի Տփխիսու անբաւ ամբոխիւ, զորոց
որքանութիւնն անբաւ գոլով՝ ոչ կարացաք
գրել, և եկեալ հասաք ի կամուրջն կոտ-
րած՝ զոր Ենղբօրմի ասեն, յաւուր ածնի
սրբոյ Խաչին։ Եւ ապա ասա յայսմ աւուր
յառաջ կոչեցեալ զիս՝ հրամայեաց նախ-
քան զինքն յառաջ ընթանալ յերկիրն մեր
Պարսաքաղ, և զհայազուն զօրսն՝ որ գումա-
րեալ կային անդ ի ձեռն Մելիքներացս, և
չորս գլխաւորք եղեալ երիտասարդացն, որոց
անուանքն են Էլան, Շրուան, Շահնի, և
Սարուխան, որ և սոքա հարիւրապետք և
իշխանք կոչէին։ Սոքա ընդ Մելիքներացն
Պարսաքաղս, զկնի առաջին դառնալոյն
Վախտանկին և խախտելոյ իշխանութեան
Պարսից, միաբանեալ ընդ ինքեանս զամե-
նայն քաջասիրտ և արիական և զօրեղ ման-
կունս և երիտասարդս տանս Աղուանից,
քան ինքեանց կազմեալ էին զօրս բազում
աւելի քան զերկոտասան հազար, և ամ-
բացեալք յամուր վայրն Աղցախու։ Եւ
այսպէս բազում արիութիւնս ցուցեալ
յերկրին մերում. որոց պատմութիւնքն յա-
ռաջակայսդ յաճախագոյնս գոցես։

Այժմ լուեալ սմա զսոցանէ՝ շեշտակի
ձեռով յղեաց զմեզ վասն առ ինքն ածելոյ

զնոսա կազմ զօրք։ Եւ ըստ Հրամանին ե-
կեալ մեր յարդարեցաք զնոսա ըստ օրինի
զօրաց իշխանաց, վասն զի անվարժք էին
զինուորական ապառաւորութեանց. և այս-
պէս բովանդակեալ զամենայն, և իբրեւ
տասն հազար արս ընտիրս և սպառազէնս.
ընդ որոց և զդասս քահանայից և պաշտօ-
նէից մերոց առեալ մեծաւ ճոխութեամբ
և խնճոյիւք, համարելով նոր նորոգեալ զիշ-
խանութիւն Հայոց. և գնացեալ ինքաք մերձ
ի քաղաքն Դանչայ, Զօլակ անուն վայրն՝ յա-
ւուրս երիս։ Բանզի և թագաւորն Վախ-
տանկ բնակեալ էր յայն կողմ քաղաքին՝ ի
վերայ ջրոյն որ Աղջարի գետ և Արա-արխ
ասեն. և զկնի երից աւուրց ապա Հրաման
արար գնալ առ ինքն։ Որ և ելեալ գնա-
ցաք։ Եւ ի մերձենալ բանակի նորին, ինքն
իսկ Հրաման արար զօրաց իւրոց ընդ առաջ
լինիլ մերոցնոցն՝ իբրեւ ողջամբ ընդունելով
զնոսա։

Եւ այսպէս մեծաւ շքով ի հանդիպիլ մի-
մեանց երկուց կողմանց զօրացն, և իբրեւ
զօրէն պատերազմի ռազմ կարգեալ ճակատ
առ ճակատ. և քաջամարտիկ մանկունք մե-
րոցս դիմաց յառաջ խաղացեալ ճոխար ա-
ռեալ քաջընթաց երիվարօք, և զինակազմ

պրահիւք պարէին յանդիման ճակատուն. և
ի ձայնէ հրացանացն որոտայր և թնդայր
վայրն այն. և փոշեխառն ծուխ նորին, իբ-
րեւ զկայծակնափայլ ամպ արդել զճառա-
գայթս արեգական, մինչ զի զմիմեանս հա-
կիւ տեսանէաք։ Եւ այսպիսի խրախու-
թեամբ հասեալ ինքաք մերձ առ բանակի
նոցին։ Զոր տեսեալ Վախտանկին այսպի-
սի յառաջադիմութիւն մերայնոցս, ցնծացաւ
ի հոգի և ի մարմին իւր։ Եւ նոյնժամայն
յղեալ կոչեաց առ ինքն զմեզ, և զգլուխ
կարդեալ ողջոյն և զՆէլնքան. և յորդորա-
կան բանիւ յուսադրեաց, և զօրացոյց ասե-
լով. "Այսուհետեւ զօրասջիք և քաջ լերուք
իբրեւ յորդիս զօրութեան. և յուսատիք և
յուսեքէ մի երկնչիցիք, զի ահա հասեալ է
ժամանակ փրկութեան քրիստոնէից"։ Եւ
դարձուցեալ զքանն առ մեզ, և յոյժ շնոր-
հակալ եղեւ զմէնջ. և ի վաղիւն զամենե-
ցուն զգլխաւորսն խիլայեաց. և այսպէս
մնացաք առ նմա իբրեւ աւուրս քսան և
հինգ։

Եւ պատճառ սորին այսպէս սէր առնե-
լոյն ընդ մեզ՝ այս է. առաջինն՝ զի բնական
սէր ունէր ընդ ազգիս Հայոց. և ոչ այնքան
հաւատայր ազգին իւրոյ Վրաց որք միշտ

ենենգաւորք և խորամանկք են, վասն այն կամէր զոյս զօրս՝ մանաւանդ ազգս Հայոց իւրն սեփհականեցուցանել որպէս Տփխիսեցիք։ Եւ երկրորդ՝ զի յատկացեալ և ըստուգեալ էր գոլուստ մեծի կայսերն Ռուսաց Պետրոսի, և կամէր Հայ և Վրացի զօրքք ճոխ և շքեղ ընդ առաջ ելանել նմա։ Բայց զկնի յոլով ակնկալութեան և սպասաւորելոյ համբաւոյ գալստեան նորին, մեղք մեր յառաջընթաց եղեւ քան զնա. զի եկն ետհաս ի Դուռն Շրկաթի, այսինքն՝ ի Դարբանտ, և բնակիչք տեղւոյն ինքնակամ յօժարութեամբ ետուն զամուրն ի ձեռս նորա։ Բայց ոչ գիտեմ զինչ պատահումն եղեւ. ոմանք ասացին զի ի հիւանդութենէ և յայլ պատահարաց վնասք յոլով եղեւ զօրուն, և կստորումն ձիոց վասն անընդելութեան նոցա օդոյ եղանակի երկրին. այլ և նաւաբեկութիւն եւս լեալ զինուց, այսինքն ջոպխանից, (ճէպհանէ) և ռոճկաց զօրուն. և այլք այլ իմն պատճառս ասացին։ Զինչ և իցէ, անտի եղեւ դարձ նորին, թողեալ զօրս յոլովս անդ՝ պայմանեալ ի գալ միւսոյ ամին դարձեալ դառնալ. և ինքն չոքաւ յերկիր իւր։

Եւ զոյս լուեալ Վախտանկ, սա եւս

ակաւ դառնալ ի տեղի իւր. զի ի սոյն նը-
ւադում համբաւ եւս եհաս ի դրանէ թա-
գաւորին Պարսից, թէ զքաղաքն Ղսպահան՝
Շահն և զօրք իւր ի ներքս փակեցին, և մերձ
են ի յառնուլ։ Ապ եւս զկնի իւր սուր-
հանդակքս եւս հասին, եթէ ահա ի հին
թշնամեաց քոց կամին յառնել ի վերայ
սոսա քաղաքիս քո, փութանակի պարտիս հա-
սանել այսր։ Յաղագս որոյ վարդապետի յա-
ղուցեալ դարձաւ ընդ կրունկն, և սուղ
ինչ պատերազմեալ ընդ Պազախսու երկրին
սակս առաջնոյ ինչ քինու իւրեանց, գնաց
ի տեղի իւր ի քաղաքն Տփղիս։ Իսկ մեք ան-
յոյս մնացեալ առաջնոյ սասացեալ յուսոյն,
դարձաք իւրաքանչիւր ի տեղիս մեր, և ամ-
բացաք ի լերինս ուր և դժուարին էր։

Բայց սակս որպիսութեանց Վախտանգ-
կին դարձեալ կոյ մեզ ասել սակաւ ինչ
պատմութիւն. զի զկնի դառնալոյ նորա՝
տակաւին բռնաւորն Դանջայու և Կախե-
թու և Երեւանու և Պորչալուին, և
Պազախսու ի տեղիս իւրեանց էին։ Սոքա
ամենեքին թշնամիք եղեալ ընդ նմա, մա-
նաւանդ ուրացեալն Մհամմատղուլի խանն
Կախեթու, որոյ յառաջն Կոստանդ ասէին, ի
թոռանց Թամրազին. և Օղուրլու անուն

խանն Գանջայու, որ ազգաւ և ի բնուստ թշնամիք էին ընդ ազգին Վախտանկայ, այժմ միաբանեալ առ հատարակ յապստամբութիւն, գրեցին զՎախտանկայ առ նոր անուանեալ շահն Մահմատ. քանզի մի ի յորդւոցն շահ սուլտան Հուսէինին՝ Մահմատ անուն, փոխուցին զԱրպահանուս և բերեալ ի Վաղուին արարին շահ։ Զոր սա գրեցին վասն Վախտանկին, եթէ խորհեալ է զապստամբութիւն ի քէն, միաբանէ ընդ ինքեան զազգն Հայոց և Վրաց, և դեսպան նոցա արձակեալ առ թագաւորն Ռուսաց՝ զի եկեալ տիրեսցէ աշխարհիս քո։ Ընդ՝ զոր ինչ հաճոյ է յաչս քո՝ հրամայեսցես առնել։ Իսկ նորաբուսիկ անխոհեմն այն գրեաց հրամայական, եթէ զերկիրն Կախեթու, և Քարթալոյ որ է Տփխիս, բոլոր թուումանոք Վրաց՝ եւսու Մահմատղուլի խանին, և զամենայն գլխաւորս և զլօրս Գանջայու, Երեւանու, և զայլս և զվերոյ գրեալսն եւսու օգնական նմա, ահա պահանջեմ ի ձէնջ զՎախտանկն, և կամ զգլուխ նորին վասն վաղակի յղեսջիք առ իս։ Զոր ապա յամենայն կողմանց ժողովեալ զօրաց ի վերոյ նոցա, և նոյն ինքն Մահմատղուլի խանն, ի գիշերի գաղտ եմուտ ի բերդն՝ ոչ գիտելով

Վախտանկին. և ընդ առաւօտն յանկարծակի ձգեաց Լոթ ի վերայ տանն Վախտանկին և ասէ. «Հրամանն է շահին, եկ ասոի և գնա»։ Իսկ նա հաղիւ թէ զերծեալ էր ի Պարսից, զոր յառաջնմէ երդմամբ կոչեցին առ ինքեանս, և զամս երիս ի խորին Պարսկաստան յաքսորս պահեցին. և դարձեալ ետուն զսպարապետութիւն զօրացն Պարսից զամս երկուս. և ապա զիւր հայրենի իշխանութիւնն տուեալ հրամայեցին դառնալ ի տեղի իւր։ Յետ այսորիկ եկեալ Վախտանկն, և թէպէտ առ երեսս այլ ինն կերպիւ կեայր, այլ ըստ մտացն խորհրդոյ՝ զոչնումն սրտին յայտնի էր յաչս ամենեցուն. վասն այնորիկ յոյժ ատելիք էին նմա Պարսիկք, և նոքա նմա թշնամիք. այժմ ի յօրինել ի վերայ նորա պատերազմն, և նա ժողովեաց զզօրս իւր, մանաւանդ զքաղաքացիսն, զՀայաստանն քաջամարտիկ գօրականսն, որք զհոգիս և զորդիս, զինչս և զանձինս եդեալ էին ի վերայ նորա յօժար սրտիւ. և ակիզբն ար՝ ի՛ զպատերազմն յառաջնորդէն դեկ ուերբ՝ եր ամսոյ՝ մինչեւ ի ութն սրբոց Օտակին. Վախտանկն վրացի և հայ զօրքք, իսկ Ահմանատուլին պարսկօք։

Օ՛ինչ այլ գրեցից սակս յաւերութեան

և գերութեան և սպանութեան երկրին այնմիկ, այլ զի առաջինն այն եղեալ աւարառ իրին որ զգօրն Պարսից յաղթահարեցին կո-տորմամբ և վախճանական առնելով. և ըզ-նոյն ինքն զԱհամմատալաբին զսա ի գօրացն միայն գտեալ՝ հալածեալ էին մերձ ի հասա-նել. և նա զերասանակ երիվարին ուղեալ էր առ գետն Կուր ի ներքոյ քաղաքին Տփխիսու։ Եւ այնպէս երիվարն արկեալ զինքն ի գե-տին, և ի լաղ անցեալ յայնկոյս՝ գնաց յեր-կիր իւր ի Կախէթ. բայց ոչ կասեցաւ և ոչ դադարեաց ի չարութենէ, զի որպէս զհուր վառեալ էր ի չար նախանձուն, և երկրորդ Յուդայ գրեցեալ էր զհայր իւր զսատանայ։ Բանզի գնացեալ իսկոյն ընդ իւր միաբա-նեցոյց զազգն Լազկեաց և զամենայն կովկա-սային լեռնաբնակիչսն, զի անյուսացաւ ի կողմանցն Պարսից. և ընդ նոսա ուխտեաց այսպէս. «Եթէ սատարիցէք ինձ և օգնիցէք և ձերով օգնականութեամբ և զօրութեամբ առիցս զքաղաքն Տփխիս, ձեզ տացս որ ինչ գտանիցի ի նմա, ոսկի և արծաթ, կերպա-սեղէնն, կոտաւն, և քրդեղէնն, պղինձն, երկաթն, և անագն, միանգամայն և գե-րին զոր ի նմա գտանիցէք։ Եւ ի վերայ այ-սքր ամենայնի ըստ մարդաթուի ձերոյ ա-

մենայն մարդոյ երիս թուման եւս յինէն
ասայ, միայն թէ մեծ նախանձու իմոյ զվը-
րէժն առից »։

Այս լուեալ ինամանէ կիրթքն ի չարիս,
և աշխարհակործան մոլեգին լեգէոնն սա-
դայելի, զի այսպիսի աւետիս եւ զօրապե-
տն իւրեանց, և յոյժ զուարճացան ի սիր-
տս իւրեանց, և խոստացան կատարել զկա-
մս նորա։ Եւ վաղվաղակի ի մի վայր ժո-
ղովեալ բազմութիւն յոյժ վայրենաբարոյ
ազգայն լեռնական բարբարոսաց, հանդերձ
գլխաւորքն իւրեանց զոր Ալի սուլթան և
Իամի ասէին, և այլք ոմանք։ Եւ յերիս բա-
ժանեալ զզօրս վիճակաւ ելին ի վերայ ամե-
նափարթամ քաղաքին Տփխիսաւ, որում ի բա-
զում ժամանակաց ցանկային. և յանկարծ
ինն եկեալ պաշարեցին զքաղաքն։ Բանզի
զօրք Աֆստանկին ցրուեալք էին, և ինքն
անհոգ կայր. և աւուրս ինչ դիմակայեալ
և եռեւս զի յուսահեքէ ոչ եհաս օգնութիւն,
այլ և ոմանք ի գլխաւորացն Աֆրայ և մեծա-
մեծայ յետս չոգան ի նմանէ, որ էր Աբրա-
ղալխանու Վէօրդի յերիս թաւն և Աֆղանե-
ցիք, և ի քաղաքէն ոմանք եւս։ Այս տեսեալ
Աֆստանկին՝ զի յամառելն ոչ օգուտ բերէ
ինքեան և ոչ քաղաքին, իւրովի եկ աբ-

տաքս ի քաղաքէն յեկը ինչ։ Եւ հրաման
եւս գլխաւորաց քաղաքին եւանել ընդ ա-
ւաջ նորա և յօժարութեամբ առնուլ ի
ներքս զզօրն. զի թերեւս մի խոպոռ աւե-
րեսցեն զնոսա, և զի վերծցին ի գերութենէ
և ի սատակմանէ, վասն զի խնայեաց ի քա-
ղաքն, քանզի սեփական հայրենիք իւր էր։
Եւ ինքն գնացեալ ի վեր ամրացաւ ի խո-
րին Վրաստան, և անտի ստէպ ստէպ հր-
բեշտակս և դեսպանս առաքէր առ թա-
գաւորն Ռուսաց, զի զօրս հասուցցէ ին-
քեան ի Թիկունս, և ոչ ժամանեաց։

Իսկ Ամիրսպարապետն յորժամ եմուտ
ի քաղաքն հանդերձ բազմութեամբ Լազ-
կեաց, և իսկոյն սկսան որսանել զքաղաքն
տանել ի տուն, և դրանել ի դուռն. այլ և
զեկեղեցիսն ամենայն և զվերնատունն և
զներքնատունսն նոցա։ Եւ զի ի յոլով ժամա-
նակաց և այսր անդրդուելի էր ի թշնա-
մեաց, և խաղաղացեալ ի պատերազմի ա-
մենափարթամ և վայելուչ քաղաքն Տփխիս.
և որպէս ամենեցուն է յայտնի, բազմուշ
խատ վաճառականք են այնք տեղւոյն, և
փարիկասունք և դեղեցկատիպ կանայք,
ուստերք և դստերք նոցա, և ըստ կենցա-
ղոյս քաղաքավարութեան անենմանք ի բոլ-

մաց . ապարանիւք գեղապաճուճօք զարդա-
ւեալ, կահիւք և կարասեօք ուռճացեալք. և
բաւ ժամանակի իշխանութեան Հայոց զա-
մենայն սպասս և անօթս տանց և սեղա-
նոց նոցա գոլովս փոխանակ պղնձոյ՝ արծա-
թեղէնս և ոսկեղէնս էին կազմեալ . իսկ
գիանդերձից և զգեստուց զարդուց ակա-
նակուռ դիպակաց մարգարտաշարաց պայ-
ծառութիւն՝ դիտեա որչափ որ միտք քո բա-
ւեն : Այլ վասն եկեղեցեացն շքեղութեան
և պայծառութեան զի՞նչ ասացից . զի յոյժ
շքեղացուցեալ էին ոսկեղինօք և արծա-
թեղինօք և դիպակօք և ամենայն կահիւք
և կարասեօք և անօթեղէն սպասիւք : Այս
ամենայն գրեալքս ի ձեռն առին վայրենի և
անագորոյն և ագահութեան մատամբ ան-
յադ գազանաբարոյ և տգրկանման աղգքն
այնոքիկ . և կոզոպտեալ թափեցին յինքեա-
նըս զբաղմութիւն աւարին և զմանկանց և
զտղայոց , կանանց և աղջկանց՝ զաչաց զհա-
ճոյան առին ի գերութիւն . իսկ զխայտա-
ռակութեանց դչափ ո՞ կարէ պատմել , և զա-
ւարին զթիւն ո՞ կարէ ընդ գրով արկանել :
Հայց սպանութիւն և այլ աւելի գերեվա-
րութիւն ոչ այնքան արարին , վասն զի ոչ ե-
թոգ խանն . այլ նոքա և ոչ նմա ըսէին , քան-

վի զխոստացեալ դրամն խնդրէին. վասն ո-
րոյ ծանր հարկս էարկ ի վերայ քաղաքաց-
ւոցն անչափ համարօք, իբրեւ քառասուն
հազար լիռման, և առեալ զայն՝ ետ նոցա,
և արձակեաց գնալ ի տեղի իւրեանց։

ՎԵՐՋ